

# Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան

Մեծ Պալատ

Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով

(Բողոք № 13279/05)

Վճիռ

Ստրասբուրգ

Հոկտեմբերի 20, 2011թ.

*Այս վճիռը վերջնական է, բայց կարող է ենթարկվել խմբագրական վերանայման:*



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:

## Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որպես Մեծ պալատ հանդես գալով հետևյալ կազմով. նախագահող՝ Նիկոլաս Բրատզա, դատավորներ՝ Ջոզեպ Կասադևալ, Նինա Վայիչ, Դին Սպիելման, Քրիստոս Ռոզակիս, Յոռնեյիու Բիրսան, Անատոլի Կովլեր, Էլիզաբետ Ֆուրա, Լիլիանա Միյովիչ, Էգբերտ Միյեր, Դավիթ Դոր Բյորգվինսոն, Ջորջ Նիկոլաու, Լուիս Լոպես Գերա, Նոնա Յոցորիա, Ան Փաուեր-Ֆորդ, Իսիլ Կարակաս, Գիդո Ռայմոնդի և մատենավարի տեղակալ՝ Մայքլ Օ'Բոյլ, 2011թ-ի մարտի 9-ին և սեպտեմբերի 21-ին կայացած դրնփակ խորհրդակցությունների արդյունքում հանգել է հետևյալ վճռի, որը կայացվել է վերոհիշյալ թվականին.

### Վարույթը

1. Գործի համար առիթ է հանդիսացել 2005թ-ի ապրիլի 9-ին Թուրքիայի քաղաքացիների՝ պրն Նեջդետ Սահինի և տկն Պերիհան Սահինի (ղիմումատուներ) կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 34-րդ հոդվածով Թուրքիայի Հանրապետության դեմ ուղղված դիմում-բողոքը (№ 13279/05):

2. Դիմումատուներին, ում տրվել էր իրավական օգնություն, ներկայացրել է պրն Կ. Կարաբուլուրը՝ Անկարայում աշխատող իրավաբան: Թուրքիայի կառավարությանը (այսուհետ՝ Կառավարություն) ներկայացրել է նրանց համագործակալ պրն Մ. Օզմենը:

3. Դիմումատուները պնդել են, որ ներպետական դատարանների դատավարություններն անարդար են եղել, քանի որ տարբեր դատարանների կողմից ընդունված որոշումները հակասել են միմյանց: (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ):

4. Դիմում-բողոքը հանձնվել է Դատարանի երկրորդ բաժանմունք (Դատարանի կանոնների 52-րդ կանոնի 1-ին կետ): 2010թ-ի մայիսի 27-ին այն ճանաչվել է ընդունելի այդ բաժանմունքի պալատի կողմից՝ բաղկացած հետևյալ դատավորներից՝ Ֆրանսուազ Տուլկենս, Իռենո Կաբրալ Բարետո, Վլադիմիրո Զագրեբելսկի, Դանութ Յոյենե, Դրագոյուր



Նեջդետ Սահիևը և Պերիհան Սահիևը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

Պոպովիչ, Անդրաս Սայո, Իսիլ Կարակաս, ինչպես նաև բաժանմունքի մատենավար Ալսուֆ Սալի Դուլե: Վերջիններս, վեց ձայն ընդդեմ մեկի, գտել են, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

5. 2010թ-ի օգոստոսի 25-ին դիմումատուները գործը Կոնվենցիայի 43-րդ հոդվածի և 73-րդ կանոնի հիման վրա Մեծ պալատին հանձնելու դիմում են ներկայացրել: 2010թ-ի հոկտեմբերի 4-ին Մեծ պալատի հանձնաժողովը ընդունել է դիմումը:

6. Մեծ պալատի կազմը որոշվել է համաձայն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի , ինչպես նաև 24-րդ կանոնի: Քանի որ Ջոն-Փոլ Կոստան չէր կարող մասնակցել երկրորդ խորհրդակցությանը, Նիկոլաս Բրատզան նրան փոխարինել է որպես Մեծ պալատի նախագահող, իսկ Էգբեչտ Միյերը՝ առաջին փոխարինողը, դարձել է լիարժեք անդամ (կանոն 11): Կորնելիու Բիրսան՝ երկրորդ փոխարինողը, փոխարինել է Կրիստինա Պարդալուսին, ով չէր կարող մասնակցել խորհրդակցությանը:

7. Դիմումատուները և ոչ թե Կառավարությունը գրավոր ձևով ներկայացրել են իրենց դիտարկումները գործի վերաբերյալ:

8. Լսումները իրականացվել են դռնբաց կարգով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի շենքում՝ Ստրասբուրգում, 2011թ-ի մարտի 9-ին (կանոն 59, կետ 3):

Դատարանի առջև հանդես են եկել.

Կառավարության անունից՝ պրն Մ. Օզմեն (համագործակալ), պրն Կ. Էսեներ, պրն Օ. Միդեմ, պրն Մ. Կ. Երդեմ, պրն Ն. Յամալի, պրն Լ. Երտուզուն, տկն Ֆ. Սոզեն, խորհրդականներ տկն Կ. Կոկայիզիթ, տկն Ա. Օզդեմիր (խորհրդական)

Դիմումատուների անունից՝ պաշտպան պրն Կ. Կարաբուլութ, օգնական տկն Մ. Տունսել

Դատարանը լսել է պրն Կարաբուլութի և պրն Օզմենի ելույթները:

## Փաստեր

### I. Գործի հանգամանքները



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:

## Նեչդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

9. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1949 և 1950թթ-ին և ապրում են Անկարայում:

10. Նրանց որդին, որը ռազմական օդաչու էր, մահացել է 2001 թ. մայիսի 16-ին, երբ զինվորներին Դիարբեքիից Անկարա տեղափոխելիս նրա ինքնաթիռը վթարի է ենթարկվել Մալաթիա (Ակսադազ/Գուլյուրդու) գյուղի մոտ: Նույն վթարի արդյունքում մահացել է ևս 33 ծառայող, որոնցից 5-ը նույնպես ինքնաթիռի անձնակազմի անդամ էին:

11. 2002թ-ի մայիսի 10-ին դիմումատուներն իրենց փաստաբանի միջոցով դիմել են Թուրքիայի թոշակային ֆոնդի վարչություն հակաահաբեկչական ակտի (այսուհետ՝ № 3713 օրենք)՝ № 3713 օրենքի 21-րդ կետին համապատասխան իրենց հասանելի թոշակն իրենց վճարելու պահանջով:

12. 2002թ-ի մայիսի 23-ին գրված նամակում թոշակային ֆոնդի վարչությունը նշել է, որ դիմումատուներին տրվել է, *inter alia*, պատերազմի արդյունքում ձեռք բերած հաշմանդամության ամսական թոշակ համաձայն № 5434 օրենքի 64-րդ ենթակետի, ինչպես նաև հանրային ծառայողի առավելագույն աշխատավարձի երեսնապատիկ չափով միանվագ գումար: Վարչությունը նաև նշել է, որ նրանց որդու մահը ահաբեկչական գործողության հետևանք չի եղել № 3713 օրենքի իմաստով, այլ՝ ինքնաթիռի՝ անհայտ պատճառներով վթարի հետևանք: Ուստի՝ հնարավոր չէ նրանց հաշմանդամության ամսական թոշակը բարձրացնել՝ հասցնելով այն ռազմական ծառայողի ամսական աշխատավարձի մակարդակին:

13. 2002թ-ի հուլիսի 15-ին դիմումատուներն իրենց փաստաբանի միջոցով այդ որոշման դեմ բողոք են ներկայացրել Անկարայի վարչական դատարան: Նրանք, մասնավորապես մատնանշել են, որ իրենց որդին մահացել է հյուսիսային Իրաքից հակաահաբեկչական կռիվի մասնակից զինվորներին տեղափոխելիս, ուստի նրա մահը պետք է դիտվի հակաահաբեկչական պայքարի համատեքստում:

14. 2003թ-ի ապրիլի մեկին Անկարայի վարչական դատարանի 4-րդ պալատը մերժել է հայցը՝ գտնելով, որ այն չի մտնում իր իրավասության մեջ, և նպատակահարմար է գտել գործը հանձնել Գերագույն ռազմական վարչական դատարանին: Անկարայի վարչական



## Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

դատարանը, հղում անելով Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի 2001թ-ի մայիսի 14-ի որոշմանը (Ե. 2000/77, Կ. 2001/22), նշել է.

«... որոշելու համար, թե արդյո՞ք վարչական ակտը «կապված է ռազմական ծառայության հետ» և թե որ դատարանն ունի իրավասություն, անհրաժեշտ է ուսումնասիրել այդ վարչական ակտի օբյեկտը: Եթե ակտը իրականացվել է ռազմական պահանջներին, ընթացակարգին և պրակտիկային համապատասխան, ապա այն պետք է համարել կապված ռազմական ծառայության հետ ... Այն հանգամանքը, թե արդյո՞ք ռազմական, թե ոչ ռազմական մարմին է եղել ակտի հիմքում, կարևոր չէ: Գերագույն ռազմական վարչական դատարանն իրավասու է քննել զինված ուժերի անդամների կողմից ներկայացված գործերը: Մույն գործում խնդրո առարկան հայցվորների կողմից ներկայացված՝ № 3713 օրենքին համապատասխան ամսական թոշակի պահանջն է: Որոշելու համար, թե արդյո՞ք այդ պահանջը մտնում է այդ օրենքի կարգավորման շրջանակի մեջ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ռազմական ծառայության նպատակին, այն տեղանքների առանձնահատկություններին, որտեղ իրականացվում է ծառայությունը, ինչպես նաև ռազմական ունակություններին՝ ցույց տալու համար, որ վիճարկվող ակտը իրականացվել է ռազմական պահանջներին, ընթացակարգին և պրակտիկային համապատասխան:

Այսպիսի դեպքերում ... Գերագույն ռազմական վարչական դատարանը պետք է քննի և լուծի վեճը:

Ավելին, սա Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի № E. 2000/77, K. 2001/22 2001թ-ի հունիսի 18-ին Օֆիշլ Գագետում հրապարակված որոշման հիմնավորումն էր»:

15. 2003թ-ի հունիսի 3-ին դիմումատուներն իրենց գործը ներկայացրել են Գերագույն ռազմական վարչական դատարանի առջև: Իրենց պահանջը ներկայացնելիս նրանք հղում են կատարել 2003թ-ի հունվարի 22-ին Անկարայի վարչական դատարանի 10-րդ պալատի կողմից ընդունված որոշմանը (E. 2002/1059, K. 2003/27), որը վերաբերում էր նմանատիպ գործի (տե՛ս ստորև՝ կետ 26):

16. 2004թ-ի հունիսի 10-ին Գերագույն ռազմական վարչական դատարանը մերժել է նրանց պահանջը: Այն նախ նշել է, որ դիմումատուներին տրվել է պատերազմի արդյունքում ձեռք բերված հաշմանդամության ամսական թոշակ, ինչպես նաև հանրային ծառայողի առավելագույն աշխատավարձի երեսնապատիկ չափով միանվագ գումար՝ համաձայն №



Նեջդետ Սահիևը և Պերիիան Սահիևը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

5434 օրենքի 78-րդ լրացուցիչ ենթակետի և վերակարգավորված՝ համաձայն № 4567 օրենքի: Այնուհետև դատարանը հավելել է, որ դիմումատուների՝ իրենց ամսական թոշակը համապատասխան զինծառայողի աշխատավարձի մակարդակին հասցնելու պահանջը մերժվել է կոմպետենտ լիազոր մարմինների կողմից: Այն ուշադրությունը հրավիրել է այն փաստի վրա, որ № 3713 օրենքի 21-րդ կետով սահմանված արտոնությունը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ պետական ծառայողը վիրավորվում, հաշմանդամություն է ձեռք բերում կամ մահանում է որպես ահաբեկչական գործողության ուղղակի հետևանք: Այն գտել է, որ միայն այն փաստը, որ գոհը ներգրավված է եղել ահաբեկչության դեմ պայքարի հետ առնչվող աշխատանքի մեջ, բավարար չէ: Քանի որ հանգուցյալը չի մահացել ահաբեկչական գործողության հետևանքով, վիճարկվող վարչական ակտը անօրինական չէ:

17. Դատավորներից մեկը արտահայտել է իր անհամաձայնությունը՝ քննադատելով № 3713 օրենքի այդչափ սահմանափակ մեկնաբանումը: Նշելով, որ վիճելի չէ այն փաստը, որ դիմումատուների որդին, հանդիսանալով ինքնաթիռի օդաչուներից մեկը, մահացել է հակաահաբեկչական գործողությունից վերադարձող զինվորներին տվյալ ինքնաթիռով տեղափոխելիս տեղի ունեցած ավիավթարի ժամանակ, նա գտել է, որ առանցքային խնդիրն այն է, թե արդյոք նրա մահը մտնում է № 3713 օրենքի 21-րդ կետի իրավական կարգավորման ոլորտ: Նրա կարծիքով հանգուցյալի առաքելության նպատակի տեսանկյունից այդ դրույթը կիրառելի է տվյալ գործի տվյալ հանգամանքների դեպքում:

18. 2004թ-ի հուլիսի 6-ին դիմումատուները Գերագույն ռազմական վարչական դատարանի վճռի դեմ բողոք են ներկայացրել: Նրանց փաստաբանն իր դիմում-բողոքում նշել է, որ 2004թ-ի հունիսի 10-ին իր կողմից ներկայացված փաստաթղթերում և Գերագույն ռազմական վարչական դատարանի առջև լսման նույն օրը ինքը ներկայացրել է նույն վթարի ժամանակ մահացած զինծառայողների չորս ընտանիքների կողմից ներկայացված՝ դիմումատուների դիմումին նման դիմումների վրա հիմնված չորս որոշում, որոնք կայացվել են ընդհանուր իրավասության դատարանների, մասնավորապես՝ Անկարայի վարչական դատարանի 6-րդ, 10-րդ և 11-րդ պալատների կողմից: Այդ որոշումները կայացվել են հոգուտ հայցվորների: Նա բողոքել է, որ Գերագույն ռազմական վարչական դատարանը հղում չի կատարել այդ նախադեպերին և նշել է, որ կայացված վճիռը հակասում է օրենքի առջև հավասարության և միատեսակ կիրառության սահմանադրական սկզբունքներին:

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեղդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

19. 2004թ-ի սեպտեմբերի 30-ի որոշմամբ Գերագույն ռազմական վարչական դատարանը մերժել է դիմումատուների բողոքը՝ համարելով այն անհիմն, և գտել է, որ վիճարկվող վճիռը համապատասխանում է օրենսդրության ու վարույթի պահանջներին: Վճիռը տրվել է դիմումատուների փաստաբանին: Ծրարը կնքված է եղել հետևյալ ամսաթվով՝ 2004թ, հոկտեմբերի 11:

II. Գործի հետ առնչվող ներպետական օրենսդրությունը և պրակտիկան

#### A. Թուրքիայի դատական համակարգի համառոտ նկարագրությունը

20. Թուրքիայի դատական համակարգը բաժանվում է հետևյալ երեք կատեգորիաների. ընդհանուր իրավասության դատարաններ, որոնք ներառում են քաղաքացիական և քրեական դատարանները, վարչական դատարաններ և ռազմական դատարաններ: Այս կատեգորիաներն իրենց հերթին բաժանվում են ենթաբաժինների՝ ըստ քննման առարկայի: Դատարանների այս երեք կատեգորիաներն ունեն իրենց գերագույն դատարանները. ընդհանուր իրավասության դատարանները՝ Վճռաբեկ դատարան, վարչական դատարանները՝ Գերագույն վարչական դատարան, իսկ ռազմական դատարանները՝ Վճռաբեկ ռազմական և Գերագույն ռազմական վարչական դատարաններ:

21. Համաձայն սահմանադրության 157-րդ հոդվածի՝ Գերագույն ռազմական վարչական դատարանը մի մարմին է, որը որպես առաջին և վերջին ատյանի դատարան քննում է վեճեր, որոնք առաջանում են զինանձնակազմին կամ զինծառայությանը վերաբերող վարչական որոշումների և ակտերի առնչությամբ, նույնիսկ եթե դրանք կայացվել են ոչ ռազմական մարմինների կողմից: Եթե վեճը վերաբերում է պարտադիր զինվորական ծառայությանը, ապա շահագրգիռ կողմը պարտավոր չէ լինել զինված ուժերի անդամ:

22. Իրավասության վերաբերյալ վեճերի դատարան կոչվող հատուկ դատարանը իրավասու է լուծել իրավասությանն ու որոշումներին վերաբերող վեճերը, որոնք կարող են առաջանալ ընդհանուր իրավասության, վարչական և ռազմական դատարանների միջև (սահմանադրության 158-րդ հոդված):



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:

Նեղդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

## **Բ. Գործի հետ առնչվող ներպետական օրենսդրությունը**

23. 1991թ-ի ապրիլի 12-ին ընդունված № 3713 օրենքի 21-րդ կետը<sup>1</sup> սահմանում է.

«№ 2330 օրենքի՝ դրամական փոխհատուցման և ամսական թոշակի իրավունքի վերաբերյալ դրույթները կիրառելի են հանրային այն աշխատակիցների համար, ովքեր վիրավորվել կամ հաշմանդամություն են ձեռք բերել, մահացել կամ սպանվել են ահաբեկչական գործողության հետևանքով թե՛ պետության սահմաններում, թե՛ պետական սահմաններից դուրս իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ, եթե նրանք այլևս ակտիվ ծառայության մեջ չեն եղել իրենց [նախկին] պարտականությունների պատճառով ... »:

24. Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի ստեղծման և գործունեության վերաբերյալ 1979թ-ի հունիսի 12-ին ընդունված № 2247 օրենքի (որն ուժի մեջ է մտել 1979թ-ի հունիսի 22-ին)՝ գործի հետ առնչվող դրույթում սահմանված է.

### Կետ 10

«Իրավասության վերաբերյալ վեճ առաջանում է այն ժամանակ, երբ շահագրգիռ գլխավոր պետական պաշտպանը դիմում է Իրավասության վերաբերյալ վեճերի դատարան՝ քննելու իրավասության հարցը ընդհանուր իրավասության, վարչական կամ ռազմական դատարաններ ներկայացված վեճի քննության իրավասություն չունենալու վերաբերյալ առարկության մերժումից հետո...»:

### Կետ 17

«Իրավասության դրական կոնֆլիկտ առկա է այն դեպքում, երբ գործերը, որոնցում կողմերը՝ վեճի առարկան և պատճառը համընկնում են, ներկայացվում են երկու տարբեր դատարաններ՝ ընդհանուր իրավասության, վարչական կամ ռազմական, և երբ այդ դատարաններից յուրաքանչյուրը կայացնում է որոշում առ այն, որ ինքն իրավասու է լսել տվյալ գործը»:

<sup>1</sup> Այն փոփոխության է ենթարկվել համաձայն 2006թ-ի հուլիսի 18-ին ընդունված № 5532 օրենքի, որը «հանրային ծառայող» հղումը առաջին կետում փոխարինել է «հանրային աշխատակիցով»-ով:

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



## Նեղդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

### Կետ 24

«Վճիռների կոնֆլիկտ առաջանում է այն դեպքում, երբ իրավունքի իրագործումը դառնում է անհնար 1-ին կետում նշված դատարանների առնվազն երկուսի կողմից ընդունված վերջնական որոշումների անհամապատասխանության պատճառով, պայմանով, որ այդ որոշումները վերաբերում են նույն առարկային և գործողության պատճառին և ոչ թե իրավասության հետ կապված հարցերին, և որ գործի կողմերից առնվազն մեկը նույնն է ... »:

### Կետ 28

«Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանը իր որոշումների մեջ արված բոլոր եզրակացությունների մասին անմիջապես ծանուցում է տարբեր շահագրգիռ գլխավոր պետական պաշտպաններին, դատարանին, որ դիմել է իրավասության վեճը լուծելու խնդրանքով, դատարանին կամ դատարաններին, որ սպասում են որոշմանը և անձանց կամ մարմիններին, որոնք դիմել են վեճը լուծելու խնդրանքով: Բոլոր շահագրգիռ դատարանները, ինչպես նաև վարչությունները, մարմինները և անձինք պետք է հետևեն Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի կողմից ընդունված որոշումներին և ի կատար ածեն դրանք առանց հապաղման»:

### Կետ 29

«Դատարանի առանձին բաժանմունքների, ինչպես նաև ամբողջական դատարանի որոշումները վերջնական են: Ընդհանուր, ինչպես նաև բաժանմունքների կողմից ընդունված որոշումները, որոնք ըստ նախագահի առնչվում են գործին, պետք է հրապարակվեն Օֆիշլ Գազետում»:

### Կետ 30

«Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի բաժանմունքների կողմից կայացված որոշումների անհամապատասխանության արդյունքում առաջացած վեճերը պետք է կարգավորվեն ընդհանուր դատարանի կողմից ընդունված որոշումներով: Իրավասության վերաբերյալ պարտադիր որոշումները կաշկանդում են Իրավասության

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեղդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

վերաբերյալ վեճերի դատարանին և բոլոր դատական մարմիններին, իսկ հակասող վճիռների վերաբերյալ կայացված պարտադիր որոշումները կաշկանդում են միայն Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանին»:

### **C. Գործի հետ առնչվող ներպետական նախադեպային իրավունքը և պրակտիկան**

#### **1. Ընդհանուր իրավասության վարչական և Գերագույն ռազմական վարչական դատարանների որոշումները**

25. Բացի դիմումատուների կողմից հարուցված դատական գործից, ևս 17 գործ է հարուցվել ներպետական վարչական դատարաններում՝ համաձայն № 3713 օրենքի, 2001թ-ի մայիսի 16-ին տեղի ունեցած ավիավթարի զոհերի ընտանիքների կողմից Թուրքիայի թոշակային հիմնադրամի կողմից իրենց պահանջի դիմաց մերժում ստանալուց հետո:

14 վեճերը, որոնցից 4-ը վերաբերում էին անձնակազմի անդամների մերձավոր ազգականներին, լավել են Անկարայի վարչական դատարանի կողմից և լուծվել են հոգուս զոհերի ընտանիքների: 2002թ-ի հունիսի 19-ին (որոշում Ե. 2002/87, Կ. 2002/870), 2003թ-ի հունվարի 22-ին (որոշում Ե. 2002/1059, Կ. 2003/27), 2003թ-ի մարտի 31-ին (որոշում Ե. 2003/148, Կ. 2003/522) և 2003թ-ի հունիսի 26-ին (որոշում Ե. 2002/100, Կ. 2003/1073 և Ե. 2002/101, Կ. 2003/1053), 2004թ-ի հոկտեմբերի 19-ին (որոշում Ե. 2004/3051, Կ. 2004/1535 և Ե. 2004/3055, Կ. 2004/1536), 2005թ-ի հոկտեմբերի 6-ին և 14-ին (որոշում Ե. 2005/1973, Կ. 2005/1424 և Ե. 2005/1743, Կ. 2005/1011), 2006թ-ի մարտի 8-ին և 29-ին (որոշում Ե. 2006/653, Կ. 2006/594 և Ե. 2006/678, Կ. 2006/551), 2007թ-ի սեպտեմբերի 27-ին (Ե. 2007/764, Կ. 2007/1849), 2008թ-ի հունվարի 29-ին և 30-ին (Ե. 2008/82, Կ. 2008/184 և Ե. 2007/1491, Կ. 2008/135) Անկարայի վարչական դատարանի տարբեր պալատներ (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ պալատները) կայացրել են վճիռներ, որոնցում ընդունել են, որ ավիավթարի հանգամանքները մտնում են № 3713 օրենքի իրավական կարգավորման շրջանակի մեջ:

26. Մասնավորապես, 2003թ-ի հունվարի 22-ին (որոշում Ե. 2002/1059, Կ. 2003/27) ի պատասխան թոշակային հիմնադրամի՝ № 3713 օրենքով սահմանված հավելյալ թոշակ ստանալու վերաբերյալ հանգուցյալ օդաչուի ծնողների կողմից ներկայացված դիմումը



## Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով ՎՃԻՌ

մերժելու վերաբերյալ որոշման դեմ բողոքին Անկարայի վարչական դատարանը հրապարակել է իր վճիռը, որը ներառում է հետևյալ հատվածները.

« ... Գործի քննման արդյունքում պարզվել է, որ ... դիմումատուների որդին եղել է օդանավի օդաչուն ... , որի գործը կայանում էր ՔԱԿ (Քրդստանի աշխատավորական կուսակցություն) անջատողական ահաբեկչական կազմակերպության դեմ ուղղված առաքելության մեջ գտնվող հատուկ ջոկատներին իրենց զենքերի և սարքավորումների հետ մեկտեղ օպերացիոն գոտիներ, ինչպես նաև այդ գոտիներից նրանց ետ իրենց ստորաբաժանումներ տեղափոխելու մեջ: ... Նա զոհվել է 2001թ-ի մայիսի 16-ին, երբ նրա ինքնաթիռը վթարի է ենթարկվել այդ առաքելության ժամանակ: Այդ պատահարից հետո, համաձայն № 5434 օրենքի 64-րդ կետի, դիմումատուներին տրվել է պատերազմի արդյունքում ձեռք բերված հաշմանդամության ամսական թոշակ: ... Համարելով, որ իրենց որդու մահը մտնում է № 3713 օրենքի իրավական կարգավորման դաշտի մեջ՝ նրանք այդ օրենքի հիման վրա ամսական թոշակի պահանջ են ներկայացրել ... Իրենց դիմումի դիմաց ստանալով համապատասխան մարմինների մերժումը՝ նրանք հարուցել են սույն դատական գործը ... »:

Վերոհիշյալ իրավական դրույթների և դատական գործի քննումը պարզել է, որ դիմումատուների որդին մահացել է 2001թ-ի մայիսի 16-ին, երբ նրա օդանավը, որով նա հակաահաբեկչական առաքելությունից ետ իրենց ստորաբաժանումներ էր տեղափոխում ջոկատներին, վթարի է ենթարկվել: Այդ առաքելությունն ակնհայտորեն հանդիսացել է ահաբեկչության դեմ պայքարի մի մասը: Ուստի վիճարկվող վարչական ակտը պետք է առ ոչինչ համարել ... »:

27. Ամեն անգամ, երբ Անկարայի վարչական դատարանի վերոնշյալ վճիռները բողոքարկվում էին, Գերագույն վարչական դատարանը հաստատում էր առաջին ատյանի դատարանի որոշման մեջ սահմանված մոտեցումը (որոշումներ Ե. 2002/4268, Կ. 2005/333. Ե. 2003/1775, Կ. 2005/5476. Ե. 2003/3110, Կ. 2006/843. Ե. 2003/3860, Կ. 2004/4655. Ե. 2003/3856, Կ. 2004/4656. Ե. 2005/2298, Կ. 2007/8147. Ե. 2005/1399, Կ. 2007/6047. Ե. 2006/1352, Կ. 2009/7096. Ե. 2006/1802, Կ. 2009/7096. Ե. 2007/2275, Կ. 2009/8317. Ե. 2006/9775, Կ. 2009/7138. Ե. 2008/715, Կ. 2010/3868. Ե. 2008/7839, Կ. 2010/3870):

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեչդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

28. 2003թ-ի մարտի 28-ին հղում կատարելով Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի՝ 2001թ-ի մայիսի 14-ին ընդունած որոշմանը՝ ( Ե. 2000/77, Կ. 2001/22, տե՛ս ստորև՝ կետ 31) Անկարայի վարչական դատարանի 5-րդ պալատը որոշում է կայացրել, որ այն իրավասություն չունի լսելու նույն ավիավթարի ժամանակ մահացած սերժանտի ընտանիքի կողմից՝ համաձայն № 3713 օրենքի իրենց հասանելի ամսական թոշակի պահանջի մերժումը առ ոչինչ համարելու վերաբերյալ գործը (որոշում Ե. 2002/754, Կ. 2003/346): Դիմում-բողոքը ներկայացվել է Գերագույն ռազմական վարչական դատարան, որը 2004թ-ի մայիսի 13-ին կայացրած վճռով մերժել է այն՝ գտնելով, որ հանգուցյալը ահաբեկչության գոհ չի եղել (որոշում Ե. 2003/14, Կ. 2004/754): 2004թ-ի սեպտեմբերի 30-ին այն մերժել է նաև վերոհիշյալ վճռի դեմ ներկայացված բողոքը (որոշում Ե. 2004/1199, Կ. 2004/1480):

29. 2009թ-ի հոկտեմբերի 2-ին իր և իր որդու անունից 3713 օրենքով նախատեսված ամսական թոշակի մեկ այլ դիմում է ներկայացվել թոշակային հիմնադրամ հանգուցյալի այրու կողմից: Դիմումը մերժվել է, և բողոք է ներկայացվել Անկարայի վարչական դատարանի 5-րդ պալատ, որը 2010թ-ի մարտի 11-ին մերժել է այն՝ գտնելով, որ ինքն իրավասություն չունի քննելու այդ բողոքը (Ե. 2009/1631, Կ. 2001/343): Իր եզրակացություններում այն հղում է կատարել Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի՝ 2006թ-ի դեկտեմբերի 11-ին կայացրած վճռին (Ե. 2006/246, Կ. 2006/236, տե՛ս ստորև՝ կետ 32):

## 2. Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի վճիռները

30. 1999թ-ի փետրվարի 22-ին ի պատասխան փաստի և օրենքի նույն կողմերի հետ կապված հարցերի շուրջ տարբեր եզրակացությունների հանգամ ընդհանուր իրավասության վարչական դատարանների և Գերագույն ռազմական վարչական դատարանի կողմից համապատասխանաբար ընդունված որոշումների միջև անհամաձայնությունը կարգավորելու վերաբերյալ դիմումին՝ Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանը ընդունել է մի որոշում, որը ներառում է հետևյալ եզրակացությունները.

<sup>2</sup> Դատավարությունը դեռևս շարունակվում է:

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:

## Նեջդետ Սահիևը և Պերիիան Սահիևը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

«Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի ստեղծման և գործունեության վերաբերյալ № 2247 օրենքի 24-րդ կետի 1-ին ենթակետը (որը փոփոխությունների է ենթարկվել № 2592 օրենքով) սահմանում է. «Վճիռների կոնֆլիկտ առաջանում է այն դեպքում, երբ իրավունքի իրագործումը դառնում է անհնար 1-ին կետում նշված դատարաններից առնվազն երկուսի կողմից ընդունված վերջնական որոշումների տարբերության պատճառով, այն պայմանով, որ այդ որոշումները վերաբերում են վեճի նույն առարկային և գործողության պատճառին և ոչ թե իրավասության հետ կապված հարցերին, և որ գործի կողմերից առնվազն մեկը նույնն է ... »:

Համաձայն այս դրույթի՝ վճիռների կոնֆլիկտ կարող է առաջանալ հետևյալ պայմաններից բոլորի առկայության դեպքում. (a) վեճի հիմքում ընկած որոշումները պետք է կայացված լինեն ընդհանուր իրավասության, ռազմական կամ վարչական դատարաններից առնվազն երկուսի կողմից. (b) վեճի առարկան, գործողության պատճառը և կողմերից առնվազն մեկը պետք է նույնը լինեն. (c) երկու որոշումները պետք է լինեն վերջնական. (d) որոշումները պետք է լինեն վեճը ըստ էության լուծող. և (e) իրավունքի իրագործումը պետք է անհնար դարձած լինի որոշումների անհամապատասխանության պատճառով:

Քննելով ենթադրյալ կոնֆլիկտի մեջ գտնվող որոշումները՝ պարզվել է, որ դրանք եղել են ընդհանուր իրավասության վարչական դատարանների և ռազմական վարչական դատարանի կողմից կայացված վճիռներ, որոնցում վեճի առարկան և գործողության պատճառը, հիմնված լինելով տարբեր նյութական փաստերի վրա, օբյեկտիվորեն նույնն են, և կողմերից առնվազն մեկը (պատասխանող վարչական մարմինը) նույնն է. վիճարկվող վճիռները վերջնական են դարձել բողոքարկման ընթացակարգերի սպառումից հետո, և դրանք երկուսն էլ վեճն ըստ էության լուծող վճիռներ են: Սրանից հետևելով հաստատվել է, որ վճիռների կոնֆլիկտ առաջանալու համար 24-րդ կետով պահանջվող առաջին չորս պայմաններն առկա են:

Ինչ վերաբերում է այն բանին, թե արդյոք սույն գործի քննման արդյունքում իրավունքի իրագործումը դարձել է անհնար ...՝ այն իրավիճակներում, որտեղ անհատի համար անհնար է իրավունքի իրագործումն ապահովել երկու տարբեր դատարանների կողմից կայացված վճիռների անհամապատասխանության պատճառով, համաձայն 24-րդ կետի, գործը տրվում է իրավասության վերաբերյալ վեճերի դատարանին ... :

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

... Նախկին որոշումը վերացնելու վերաբերյալ Վարչական դատարանի վճիռը չի ազդում Գերագույն ռազմական վարչական դատարանի կողմից դիմումի մերժման վրա: Պատասխանող վարչական մարմինը, որը վարչական դատարանի՝ հոգուտ H-ի և F.G.-ի կայացրած վճռի լույսի ներքո պարտավոր էր չեղյալ համարել որոշումը, պարտավոր չէ այդ վճիռը իրականացնել N.T.-ի դեպքում, որը չի հանդիսացել այդ դատավարության կողմ: Քանի որ N.T.-ի կողմից հարուցված գործը կարճվել է, N.T.-ին չի կարող ունենալ դատական որոշմամբ ճանաչված իրավունք:

... Դիմումատուն չի կարող հավակնել դատական որոշմամբ ճանաչված իրավունքին, ուստի նրա դիմումը պետք է մերժվի համաձայն № 2247 օրենքի 24-րդ կետի, քանի որ «վճռի իրագործման անհնարինության» վերաբերյալ պայմանը, որը պահանջվում է վճիռների կոնֆլիկտի առկայության համար, չի հաստատվել:

31. 2001թ-ի մայիսի 14-ին Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանը կայացրել է որոշում, որի՝ գործի հետ առնչվող հատվածներում նշված է.

« ... Ամփոփում. Հաշմանդամության թոշակի դիմումը մերժելու վերաբերյալ հիմնադրամի որոշումն առ ոչինչ համարելու դիմումը, որը ներկայացրել է բժշկական զեկույցով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված անձ, ում կարծիքով իր առողջական խնդիրը զինվորական ծառայության հետևանք է, պատկանում է Գերագույն ռազմական վարչական դատարանի իրավական տիրույթին:

...  
Գործի փաստական հանգամանքները. ... Համաձայն սահմանադրության 157-րդ հոդվածի՝ Գերագույն ռազմական վարչական դատարանը, չնայած ստեղծվել է ոչ ռազմական մարմինների կողմից, համարվում է առաջին և վերջին աստիճանի դատարան այն վեճերը քննելու համար, որոնք առաջանում են վարչական ակտերի կամ զինվորական ծառայությանը և զինանձնակազմին վերաբերող վարքագծի առնչությամբ: Այնուամենայնիվ, հաստատվել է, որ զինվորական պարտականություններից դուրս առաջացող վեճերի համար անհրաժեշտ չէ որոշել՝ արդյոք համապատասխան անձը եղել է զինված ուժերի անդամ: ... Որպեսզի Գերագույն ռազմական վարչական դատարանը կարողանա քննել գործը, վիճարկվող վարչական ակտը պետք է վերաբերի «զինված ուժերի անդամին» և «կապված լինի զինվորական ծառայության հետ ... »

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

Որոշելու համար՝ արդյոք վարչական ակտը «կապված է զինվորական ծառայության հետ», և որ դատարանն ունի իրավասություն՝ անհրաժեշտ է ուսումնասիրել ակտի բովանդակությունը: Եթե ակտն ընդունվել է ռազմական ավանդույթներին, սկզբունքներին և պրակտիկային համաձայն, ապա այն պետք է համարել զինվորական ծառայության հետ կապված ...

... Մասնավորապես, զինվորական ծառայության հետ կապված վարչական ակտերն այն ակտերն են, որոնք վերաբերում են զինանձնակազմի անդամների կարողություններին, վերաբերմունքին, վարքին, ռազմական կարիերային, որպես զինված ուժերի անդամներ նրանց իրավունքներին և պարտականություններին, զինվորական ծառայության նպատակին և այն վայրերի առանձնահատկություններին, որտեղ անցկացվում է ծառայությունը: Արդյոք ակտի հիմքում ընկած է ռազմական, թե ոչ ռազմական մարմին, էական չէ: Գերագույն ռազմական վարչական դատարանն է իրավասու քննել զինված ուժերի՝ արտոնությունից զրկված անդամի կողմից հարուցված գործը:

... Եթե վարչական ակտը վերաբերում է զինված ուժերի անդամին և կապված է զինվորական ծառայության հետ, ապա Գերագույն ռազմական վարչական դատարանն է իրավասու քննել և լուծել վեճը»:

32. 2006թ-ի դեկտեմբերի 11-ին Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանը կայացրել է որոշում (Ե. 2006/246, Կ. 2006/236), որում այն նշում է, թե որ դատարանն է իրավասու լսել № 3713 օրենքով սահմանված դրամական փոխհատուցման վերաբերյալ վեճերը: Գործին առնչվող հատվածներում նշված է.

« Փաստերը. Դիմումատուի որդին մահացել է 2001թ-ի մայիսի 16-ին Մալաթիա-Ակսադակ-Գյուզուրդուում տեղի ունեցած վթարի ժամանակ, երբ զինվորներ տեղափոխող ինքնաթիռը, որն առաքելությունից հետո նրան Դիարբեքիից տեղափոխում էր Անկարա, արտակարգ իրավիճակում գտնվող շրջանում ենթարկվել է վթարի:

...

Թոշակ ստանալու դիմումի դիմաց թոշակային հիմնադրամի կողմից մերժում ստանալուց հետո, չնայած այն ենթադրել է, որ մահը տեղի է ունեցել № 2330 և № 3713 օրենքներին համապատասխան պարտականությունների կատարման ժամանակ, դիմումատուների կողմից հարուցված դատական գործի քննման արդյունքում Անկարայի

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեջդետ Սահիւնը և Պերիիան Սահիւնը ընդդէմ Թուրքիայի գործով վճիռ

վարչական դատարանի 3րդ պալատը մերժել է դիմումը 2002թ-ի հունիսի 27-ի որոշմամբ (Ե. 2001/1616, Կ. 2002/1095)՝ գտնելով, որ այն, ինչ պատահել է, ահաբեկչական ակտերի հետևանք չէ: Գերագույն վարչական դատարանի 11-րդ բաժանմունքը գործի վերաբերյալ 2003թ-ի հունվարի 30-ի վճռով բեկանել է ստորին ատյանի դատարանի որոշումը՝ գտնելով, որ դատարանը պետք է ճանաչեր դիմումատուի՝ № 2330 և № 3713 օրենքներով սահմանված իրավունքները՝ նրա որդու մահը վերագրելի համարելով ահաբեկչական ակտին: Գործը վերադարձվել է ստորադաս դատարան, որը հանգել է նույն որոշման, որից հետո Գերագույն վարչական դատարանի վարչական բաժանմունքը, նիստ գումարելով ամբողջական կազմով, 2004թ-ի ապրիլի 1-ի վճռով ընդունած որոշմամբ հաստատել է Գերագույն վարչական դատարանի 11-րդ բաժանմունքի որոշումը (Ե. 2003/774, Կ. 2004/409) և կրկին վերացրել է ստորադաս դատարանի որոշումը ...

Չնայած դիմումատուները, հետևելով Գերագույն վարչական դատարանի կողմից ամբողջական կազմով գումարված նիստում կայացված որոշմանը, որը հաստատել է, որ նրանց որդու մահը մտնում է № 2330 և № 3713 օրենքների իրավական կարգավորման ոլորտի մեջ, դիմել են պատասխանող վարչական մարմնին դրամական փոխհատուցման պահանջով՝ նրանք որևէ պատասխան չեն ստացել:

... 2005թ-ի հուլիսի 25-ին շահագրգիռ կողմերը դիմել են ընդհանուր իրավասության դատարաններ վարչական մարմնի անուղղակի մերժումն առ ոչինչ համարելու պահանջով ... Պատասխանող վարչական մարմինը առարկել է, որ իրավասություն չկա՝ ենթադրելով, որ Գերագույն ռազմական վարչական դատարանն է իրավասու ... 2006 թ-ի մարտի 2-ին Անկարայի վարչական դատարանը մերժել է առարկությունը և հայտարարել, որ այն ունի իրավասություն: ... Պատասխանող վարչական մարմինը իրավասության հարցը լուծելու վերաբերյալ դիմում է ներկայացրել ...

Գերագույն ռազմական վարչական դատարանի գլխավոր պետական պաշտպանը գտնում է, որ վեճը Գերագույն ռազմական վարչական դատարանի իրավասության մեջ է, և որ Անկարայի վարչական դատարանի 4-րդ պալատի՝ իրավասության վերաբերյալ որոշումը պետք է վերացնել ... Գերագույն վարչական դատարանի գլխավոր պետական պաշտպանը համարում է, որ վեճը պետք է հանձնվի ընդհանուր իրավասության դատարաններ ...



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

... Քննելիս՝ արդյոք դիմումատուների որդին՝ զինծառայողը, դարձել է ահաբեկչական գործողության զոհ N° 3713 օրենքի իմաստով կամ N° 2330 օրենքով նախատեսված աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ որպես այդ պարտականությունների կատարման հետևանք կամ, ինչպես որ սույն գործում, մերժումը վերանայելիս դրամական փոխհատուցման վարչությունը հաշվի է առել զինծառայողի ռազմական ունակությունները, վարքը, ռազմական կարիերան, որպես զինծառայող նրա իրավունքներն ու պարտականությունները, զինվորական ծառայության նպատակը, ռազմական առաքելությունների իրականացման վայրերի առանձնահատկությունները և ռազմական կանոնակարգերն ու ավանդույթները: Ինչ վերաբերում է սույն գործին՝ վարչական ակտը ռազմական ծառայության հետ կապված լինելու անհրաժեշտ պայմանն առկա է և վեճի հիմքում ընկած խնդրի նկատմամբ Գերագույն ռազմական վարչական դատարանն իրավասություն ունի ... »:

### III. Համեմատական օրենսդրություն

33. Որոշ եվրոպական երկրներում կա միայն մեկ Գերագույն դատարան: Այս մոտեցումն առկա է «ընդհանուր իրավունք»-ի երկրներում, ինչպես օրինակ Կիպրոսում, Իռլանդիայում և Միացյալ Թագավորությունում, սակայն նաև Ալբանիայում, Ադրբեջանում, Խորվաթիայում, Դանիայում, Էստոնիայում, Վրաստանում, Հունգարիայում, Իսլանդիայում, Լատվիայում, Մոլդովայում, Նորվեգիայում, Ռումինիայում, Սան Մարինոյում, Սերբիայում, Սլովակիայում և Շվեյցարիայում: Այլ երկրներ, ինչպես օրինակ Գերմանիան, Ավստրիան, Բելգիան, Բոսնիա և Հերցեգովինան, Բուլղարիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Իտալիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, «Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետություն»-ը, Սոնակոն, Նիդերլանդները, Լեհաստանը, Պորտուգալիան, Չեխիայի Հանրապետությունը, Շվեդիան և Ուկրաինան ունեն երկու կամ ավելի գերագույն դատարաններ:

34. Այս երկրներից շատերում օրենսդրությունը չի նախատեսում լուծել գերագույն դատարանների միջև նախադեպային իրավունքի հետ կապված հնարավոր կոնֆլիկտները և նախատեսում է լուծել միայն իրավասության հետ կապված հնարավոր վեճերը: Մարմինը,

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեղդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

որն իրավասու է լուծել այսպիսի վեճերը, կարող է լինել դատարան կամ դատարանի բաժանմունք, որը հատուկ օժտված է այս լիազորությամբ (Ֆրանսիա, Լյուքսեմբուրգ, Բուլղարիա, Լիտվա, Չեխիայի Հանրապետություն): Իտալիայում այս լիազորությունն օրենքով տրված է Վճռաբեկ դատարանին, Ավստրիայում և Անդորրայում՝ Սահմանադրական դատարանին, Մոնակոյում՝ Գերագույն դատարանին: Լեհաստանում չկա որևէ դատական մարմին, որ իրավասու լինի լուծել իրավասության հետ կապված վեճերը: Եվ վերջում նշենք, որ միայն քիչ թվով երկրներ ունեն դատարաններ, որոնք իրավասու են լուծել Գերագույն դատարանների միջև նախադեպային իրավունքի հետ կապված վեճերը (Գերմանիա, Ուկրաինա և Հունաստան): Բուլղարիայում օրենսդրությունը նախատեսում է վեճերի լուծման *a posteriori* միջոցներ:

## Օրենսդրությունը

### I. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 10-րդ կետի ենթադրվող խախտումը

35. Դիմումատուները գտել են, որ ներպետական դատարաններում կայացած դատավարությունները եղել են անարդար և որ նույն փաստի շուրջ տարբեր դատարանների կողմից տրվող տարբեր իրավական գնահատականների հնարավորությունը խախտում է օրենքի առջև հավասարության և օրենքի միատեսակ կիրառության սկզբունքները: Նրանք նշել են, որ նույն ավիավթարի ժամանակ զոհվածների ընտանիքները իրենց դիմումի նման դիմումի հիման վրա դատական գործեր են հարուցել և շահել են դրանք ընդհանուր իրավասության վարչական դատարաններում:

36. Դիմումատուների դիմումի համար հիմք է հանդիսացել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, որի՝ գործի հետ առնչվող հատվածներում սահմանված է.

« Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ... ունի գործի արդար դատաքննության իրավունք... »:

37. Դատարանը նշել է, որ, որպես լրացուցիչ նկատառում, դիմումատուներն իրենց դիմումի մեջ բողոքել են, որ Թուրքիայի իշխանությունները ոչ մի քայլ չեն ձեռնարկել ավիավթարի ենթարկված ինքնաթիռն արտադրող ընկերության դեմ: Քանի որ այս բողոքը չի



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

կրկնվել Մեծ պալատի առջև, վերջինս հետևել է Պալատի կողմից ընդունված ընդհանուր մոտեցմանը (Պալատի վճիռ, կետ 62) և գտել է, որ այս կետի առանձին քննման կարիք չկա:

## A. Պալատի վճիռը

38. Պալատը գտել է, որ իր գործառույթների մեջ չի մտնում ազգային դատարանների տարբեր որոշումների համեմատումը, նույնիսկ եթե դրանք կայացվել են ակնհայտորեն նմանատիպ դատավարությունների արդյունքում: Այն պետք է հարգի այդ դատարանների անկախությունը: Ինչ վերաբերում է Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի դիրքորոշմանը, համաձայն որի այն հաստատել է Գերագույն ռազմական վարչական դատարանի իրավասությունը, Պալատը գտել է նաև, որ դիմումատուները չեն կարող պնդել, որ դատավարությունն անարդար է եղել՝ հիմնվելով այդ դատարանի կողմից իրենց վեճի քննման արդյունքի կամ նրա եզրակացությունների վրա: Հետևաբար՝ այն գտել է, որ գործի հետևյալ հանգամանքներում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել (Պալատի վճիռ, կետեր 54-61):

## B. Կողմերի փաստարկները

### 1. Դիմումատուները

39. Դիմումատուները կասկած չունեին, որ Անկարայի վարչական, Գերագույն վարչական և Գերագույն ռազմական վարչական դատարաններին ներկայացվել էին նմանատիպ գործեր: Այդ իսկ պատճառով Գերագույն ռազմական վարչական դատարանի՝ № 3713 օրենքի հիմքով իրենց պահանջը մերժելու վերաբերյալ որոշումը դարձել է վիճարկելի, քանի որ այն հակասել է Անկարայի վարչական և Գերագույն վարչական դատարանների կողմից արված մեկնաբանություններին:

40. Այնուհետև դիմումատուները նշել են, որ Գերագույն ռազմական վարչական դատարանը հաշվի չի առել նմանատիպ գործերում ընդհանուր իրավասության վարչական դատարանների կողմից կայացված վճիռները, չնայած այն փաստին, որ դրանք ներկայացվել



Նեչդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով  
վճիռ

են նրան, և որ սա խախտում է Թուրքիայի սահմանադրության 10-րդ հոդվածում  
ամրագրված հավասարության սկզբունքը: Ի հավելում, դիմումատուները պնդել են, որ նույն  
երկրում գործող երկու դատարանների կողմից արված մեկնաբանությունների միջև  
տարբերությունը չպետք է որոշ քաղաքացիներին իրենց իրավունքներից զրկելու պատճառ  
դառնա: Այդ առումով նրանք կրկին առաջ են բերել իրենց այն փաստարկը, որ ընդհանուր  
իրավասության վարչական դատարանների և Գերագույն ռազմական վարչական  
դատարանի մեկնաբանությունների միջև տարբերությունը անդառնալիորեն խախտում է  
օրենքի միատեսակ կիրառության սկզբունքը:

41. Նրանք նաև հավելել են, որ այս հակասական մեկնաբանությունը դեմ է իրավական  
որոշակիության, ինչպես նաև օրենքի ընդհանուր սկզբունքներին: Դրա վրա հիմնված՝  
դիմումատուները բողոքել են Պալատի կողմից արված եզրակացությունների դեմ. Պալատը,  
ափսոսանք հայտնելով իրավական նույն դրույթների տարբեր մեկնաբանումների  
վերաբերյալ, գտել էր, որ միայն դա բավարար չէ իրավական որոշակիության սկզբունքը  
խախտելու համար:

42. Եվ վերջում, դիմումատուները բողոքել են Անկարայի վարչական դատարանի 4-րդ  
պալատի կողմից կայացված որոշման դեմ, համաձայն որի այն իրենց գործը քննելու  
իրավասություն չունի, մինչդեռ այդ դատարանի մյուս պալատները գտել են, որ իրենք  
իրավասու են քննել գործը: Այս առումով նրանք բողոքել են, որ Պալատն այս փաստի վրա  
հիմնված եզրակացություններ չի արել՝ համաձայն կոնվենցիայի 6-րդ հոդվածի:

## 2. Կառավարությունը

43. Կառավարությունը նշել է, որ համաձայն դատարանների անկախության  
սկզբունքի՝ մի դատարանի որոշումը պարտավորեցնող ազդեցություն չունի այլ  
դատարանների վրա, որոնք օժտված են նման կամ այլ իրավասություններով: Միայն  
գերագույն դատարանների որոշումներն են պարտադիր նույն իրավասության  
հիերարխիայում գտնվող ստորին աստիճանի դատարանների համար: Ուստի, ընդհանուր  
իրավասության վարչական դատարանների տարբեր որոշումները պարտավորեցնող



Նեջդետ Սահիևը և Պերիհան Սահիևը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

ազդեցություն չունեն ո՛չ ընդհանուր իրավասության վարչական դատարանների, ո՛չ էլ Գերագույն ռազմական վարչական դատարանի վրա:

44. Կառավարությունն այնուհետև պնդել է, որ Անկարայի վարչական դատարանի 4-րդ պալատի կողմից ընդունված՝ դիմումատուների գործը քննելու իրավասություն չունենալու վերաբերյալ որոշումը չի կարող կամայական համարվել: Որոշումը կայացվել է համապատասխան այն չափանիշներին, որոնք առկա են Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի կողմից 2001թ-ի մայիսի 14-ին կայացված վճռում, որին հղում է կատարվել և որը, հաշվի առնելով ռազմական ծառայության հետ կապը, հաստատել է Գերագույն ռազմական վարչական դատարանի իրավասությունը: Կառավարությունը նաև պնդել է, որ Գերագույն ռազմական վարչական դատարանի որոշումը չի կարող համարվել կամայական նաև այն պատճառով, որ այն համապատասխանում է № 3713 օրենքի 21-րդ կետի դրույթներին. ավիավթարի պատճառը ահաբեկչական հարձակումը չի եղել:

45. Կառավարությունը նշել է, որ համաձայն Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի մասին օրենքի հետ կապված իրավական դրույթների՝ սույն գործի փաստերը չեն վերաբերում իրավասության վերաբերյալ վեճի կամ միմյանց հակասող որոշումների: Նրանք պնդել են, որ անորոշություն չկա այն հարցի վերաբերյալ, թե որ դատարանն է իրավասու քննել դիմումատուների գործը, քանզի ներպետական օրենսդրության մեջ դա հստակ սահմանված է: Սահմանադրության 157-րդ հոդվածը (տե՛ս վերը՝ կետ 21) սահմանում է, որ Գերագույն ռազմական վարչական դատարանն է իրավասու դատական կարգով քննել զինանձնակազմի և զինծառայության հետ կապված վեճերը, և որ սահմանադրության այդ դրույթը վերասահմանված է Գերագույն ռազմական վարչական դատարանի մասին օրենքի 21-րդ կետում: 2001թ-ի մայիսի 14-ի և 2006թ-ի դեկտեմբերի 11-ի իր վճիռներում (տե՛ս վերը՝ կետեր 31 և 32) Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանը նույնպես հաստատել է այս մոտեցումը: Ուստի դիմումատուների՝ դատարան դիմելու իրավունքը չի սահմանափակվել որևէ անորոշությամբ:

46. Կառավարությունը հաստատել է, որ սույն գործում օրենքի հակասական մեկնաբանությունների հարց չի եղել: Հղում կատարելով Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի մասին օրենքի 24-րդ կետին (տե՛ս վերը՝ կետ 24), ինչպես նաև Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի կողմից 1999թ-ի փետրվարի 22-ին կայացված վճռին (տե՛ս

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

վերը՝ կետ 30)՝ նրանք նշել են, որ տարբեր իրավասությունների դատարանների կողմից ընդունված հակասական որոշումները կարգավորվում են միայն բացառիկ իրավիճակներում, երբ դատարանի որոշմամբ հաստատված իրավունքի իրագործումը դառնում է անհնար: Այդ բացառիկ հանգամանքների սահմաններից դուրս գալը կնշանակի անօրինական միջամտություն տարբեր իրավասությունների պատկանող դատարանների անկախությանը, որոնցից յուրաքանչյուրն ունի հակասական վճիռները կարգավորելու իր համակարգը: Այս կապակցությամբ Կառավարությունը հղում է կատարել Կարակայան ընդդեմ Թուրքիայի գործով վճիռին (վճիռ № 30100/06, 2011թ հունվարի 25):

47. Կառավարությունն ընդունել է, որ տարբեր իրավասությունների դատարանների կողմից տարբեր մեկնաբանություններ են արվել, բայց նաև պնդել է, որ հենց ճիշտ դատարանն է դիմումատուներին դեմ վճիռ կայացրել: Թուրքիայի դատարանների փոխդասավորությունը ըստ իրավասության դատական կազմակերպման հարց է: Այն, թե ինչպես են Պայմանավորվող Կողմերը կազմակերպել իրենց դատական համակարգերը և իրենց դատարանների իրավասությունը, գտնվում է պետության գնահատման սահմաններում: Եթե որևէ դատարան, որն իրավասություն ունի տվյալ գործի նկատմամբ, որոշում է ընդունում, որը տարբերվում է մեկ այլ՝ իրավասություն չունեցող դատարանի որոշումից, ապա, ըստ Կառավարության, անարդար կլինի նախապատվությունը տալ վերջին որոշմանը:

48. Եվ վերջում, Կառավարությունը գտել է, որ սույն գործը եզակի է և տարբերվում է միմյանց հակասող վճիռների վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքին վերաբերող մյուս գործերից, որոնք դատարանը պետք է քննել անցյալում, և ուստի կիրառելի նախադեպ չկա: Նրանք հավելել են, որ դատարանի կողմից անբարենպաստ որոշման ընդունումը չի նշանակում օրենքի կիրառման մեջ իրավական որոշակիության բացակայություն:

## C. Դատարանի գնահատականը

### 1. Ընդհանուր սկզբունքներ



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:

Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

49. Դատարանը սկզբում շեշտել է, որ իր պարտականությունների մեջ չի մտնում ներպետական դատարաններին փոխարինելը: Առաջին հերթին ազգային իշխանությունների, հատկապես՝ դատարանների խնդիրն է ներպետական օրենսդրության մեկնաբանման վերաբերյալ վեճերի լուծումը (տե՛ս Բրուալլա դե լա Տորն ընդդեմ Իսպանիայի գործով վճիռը, վճիռների և որոշումների զեկույցներ 1997-VIII. Վեյթը և Քենեդին ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը, № 26083/94, կետ 54, ՄԻԵԴ 1999-I. և Սաեզ Սաեսոն ընդդեմ Իսպանիայի գործով վճիռը, № 77837/01, կետ 22, 2004թ-ի նոյեմբերի 9): Նրա դերը կայանում է ստուգելու մեջ՝ արդյոք այսպիսի մեկնաբանությունների հետևանքները համատեղելի են Կոնվենցիայի հետ (տե՛ս Կուչոզլուն ընդդեմ Բուլղարիայի գործով վճիռը, № 48191/99, կետ 50, 2007թ մայիսի 10, և Իսյարն ընդդեմ Բուլղարիայի գործով վճիռը, № 391/03, կետ 48, 2008թ նոյեմբերի 20):

50. Ուստի ակնհայտ կամայականության դեպքում Դատարանը պարտավոր չէ վիճարկել ազգային դատարանների կողմից ներպետական օրենսդրության մեկնաբանումը ( տե՛ս, օրինակ, Ադամսոնսն ընդդեմ Լատվիայի գործով վճիռը, № 3669/03, կետ 118, 2008թ հունիսի 24 ): Նմանապես սույն գործում այն սկզբունքորեն պարտավոր չէ համեմատել ազգային դատարանների տարբեր որոշումները, նույնիսկ եթե դրանք կայացվել են ակնհայտորեն նմանատիպ դատավարությունների արդյունքում. Այն պետք է հարգի այդ դատարանների անկախությունը (տե՛ս Էնգելը և այլոք ընդդեմ Նիդերլանդների գործով վճիռը, 1976թ հունիսի 8, կետ 103, շարք A № 22. Գրեգորիո դե Անդրադեն ընդդեմ Պորտուգալիայի գործով վճիռը, № 41537/02, կետ 36, 2006թ նոյեմբերի 14. և Ադամսոնս, մեջբերված վերևում, կետ 118):

51. Դատարանն արդեն ճանաչել է, որ դատարանի հակասական որոշումները կազմում են տարածքային իրավասությամբ օժտված առաջին ատյանի և վերանայող դատարանների ցանցի վրա հիմնված ցանկացած դատական համակարգի անբաժան մասը: Այսպիսի տարբերություններ կարող են առաջանալ նաև նույն դատարանի շրջանակներում: Դա ինքնին չի կարող համարվել Կոնվենցիային հակասող (տե՛ս Սանտոս Պինտոն ընդդեմ Պորտուգալիայի գործով վճիռը, № 39005/04, կետ 41, 2008թ մայիսի 20):

52. Մինչ այդ դատարանը քննել է դատարանի հակասական որոշումների վերաբերյալ մի շարք գործեր (տե՛ս Զիելինսկին, Պրադալը, Գոնսալեսը և այլոք ընդդեմ Ֆրանսիայի



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

գործով վճիռը, № 24846/94 և 34165/96 մինչև 34173/96, ՄԻԵԴ 1999-VII. Պաղուրարուն ընդդեմ Ռումինիայի գործով վճիռը, № 63252/00, ՄԻԵԴ 2005-XII (հատվածներ). Բեյանն ընդդեմ Ռումինիայի գործով վճիռը (№ 1), № 30658/05, ՄԻԵԴ 2007- XIII (հատվածներ) և Լորդան Լորդանովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով վճիռը, № 23530/02, 2009թ հունիսի 2), ուստի այն հնարավորություն է ունեցել վճիռ կայացնել հիմնվելով այն կետերի վրա, համաձայն որոնց դրանք խախտել են արդար դատաքննության պահանջը, որն ամրագրված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում (տե՛ս Պերես Արիասն ընդդեմ Իսպանիայի գործով վճիռը, № 32978/03, կետ 25, 2007թ հունիսի 28. Բեյան (№ 1), մեջբերված վերևում, կետեր 34-40. Ստեֆանը և Ստեֆն ընդդեմ Ռումինիայի գործով վճիռը, № 24428/03 և № 26977/03, կետեր 33-36, 2009թ հունվարի 27. Լորդան Լորդանովը և այլոք, մեջբերված վերևում, կետեր 48-49 և Շվարցկոպֆը և Տոսիկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով վճիռը (որոշում) № 42162/02, 2008թ դեկտեմբերի 2):

53. Վարվելով այդ կերպ՝ այն ներկայացրել է չափանիշները, որոնցով ուղղորդվել է որոշումը կայացնելիս, այն է՝ որոշել՝ արդյոք առկա են գերագույն դատարանի նախադեպային իրավունքի մեջ խորը և վաղեմի տարբերություններ, արդյոք ներպետական օրենսդրությունը ապահովում է այս տարբերությունները կարգավորելու համար անհրաժեշտ մեխանիզմներ, արդյոք վերջիններս կիրառվում են, եթե կիրառվում են պատշաճորեն, ապա ինչ արդյունքներ են ունենում (տե՛ս Լորդան Լորդանովը և այլոք, մեջբերված վերևում, կետեր 49-50):

54. Դատարանին նաև դիմում է ներկայացվել վճիռ կայացնել այն հակասական որոշումների վերաբերյալ, որոնք կայացվել են նույն վերաքննիչ դատարանի (տե՛ս Թյուդոր Թյուդորն ընդդեմ Ռումինիայի, № 21911/03, 2009թ մարտի 24) կամ տարբեր շրջանային դատարանների կողմից՝ հանդես գալով որպես վերջին աստիճան (տե՛ս Ստեֆանիկան և այլոք ընդդեմ Ռումինիայի, № 38155/02, 2010թ նոյեմբերի 2): Բացի նրանից, որ վիճարկվող տարբերությունները խորը և վաղեմի բնույթ են կրել, շահագրգիռ դատարանների գործունեության ընթացքում առաջացած կոնֆլիկտների արդյունքում առաջ եկած իրավական անորոշությունը և հակասող որոշումները կարգավորելու համար նախատեսված մեխանիզմները նույնպես խախտել են արդար դատաքննության իրավունքը (տե՛ս Թյուդոր





Նեղոյեցի Սահիլը և Պերսիական Սահիլը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

Թյուրքոյ, մեջբերված վերևում, կետեր 30-32, և Ստեֆանիկա և այլոք, մեջբերված վերևում, կետեր 37-38):

55. Այս առումով դատարանը շատ առիթներով շեշտել է մեխանիզմներ ներմուծելու կարևորությունը դատական պրակտիկայի մեջ հետևողականության և դատարանի նախադեպային օրենսդրության միասնականության ապահովման համար (տե՛ս Շվարցկոպֆ և Տոսիկ, մեջբերված վերևում): Այն նմանապես հայտարարել է, որ պետություններն են պատասխանատու կազմակերպել իրենց դատական համակարգերն այնպես, որ խուսափեն հակասող վճիռների կայացումից (տե՛ս Վրիոնին և այլոք ընդդեմ Ալբանիայի, № 2141/03, կետ 58, 2009թ մարտի 24. Մուլայը և այլոք ընդդեմ Ալբանիայի, № 9074/07, կետ 86, 2010թ մարտի 23. և Բրեզովեցն ընդդեմ Խորվաթիայի, № 13488/07, կետեր 66, 29 2011թ մարտ):

56. Քննման համար իրեն ներկայացված հանգամանքների վերաբերյալ իր գնահատականները միշտ հիմնված են եղել իրավական որոշակիության սկզբունքների վրա, որոնք հստակորեն սահմանված են Կոնվենցիայի բոլոր հոդվածներում, և կազմում են օրենքի գերակայության հիմնարար կողմերից մեկը (տե՛ս Բեյան (№ 1), մեջբերված վերևում, կետ 39. Լորդան Լորդանովը և այլոք, մեջբերված վերևում, կետ 47. և Ստեֆանիկա և այլոք, մեջբերված վերևում, կետ 31): Իսկապես, անորոշությունը՝ լինի դա իրավական, վարչական, թե իշխանությունների գործունեության արդյունքում առաջացած, մի գործոն է, որը պետք է հաշվի առնել պետության վարքագիծը քննելիս (տե՛ս Պադուրարու, մեջբերված վերևում, կետ 92. Բեյան (№ 1), մեջբերված վերևում, կետ 33. և Ստեֆանիկա և այլոք, մեջբերված վերևում, կետ 32):

57. Այս առումով դատարանը նաև ընդգծել է, որ արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որը հռչակում է, որ օրենքի գերակայությունը կազմում է պայմանավորվող երկրների ընդհանուր ժառանգության մասը: Այժմ, օրենքի գերակայության հիմնարար կողմերից մեկը իրավական որոշակիության սկզբունքն է (տե՛ս Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով վճիռը, № 28342/95, կետ 61, ՄԻԵԴ 1999-VII ), որը, *inter alia*, երաշխավորում է որոշակի կայունություն իրավական իրավիճակներում և խթանում է դատարանների նկատմամբ հանրային վստահությանը (տե՛ս, *mutatis mutandis*, Ստեֆանիկա և այլոք, մեջբերված վերևում, կետ 38 ): Հակասական

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

դատական որոշումները մյուս կողմից ստեղծում են իրավական անորոշության վիճակ, որը հավանական է, որ նվազեցնի դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունը, մինչդեռ այդ վստահությունն ակնհայտորեն օրենքի գերակայության վրա հիմնված պետության կարևոր բաղադրիչներից մեկն է (տե՛ս Պադուրարու, մեջբերված վերևում, կետ 98. Վինցիչ և այլոք ընդդեմ Սերբիայի գործով վճիռը, № 44698/06 և այլն, կետ 56, 2009թ դեկտեմբերի 1. և Ստեֆանիկա և այլոք, մեջբերված վերևում, կետ 38):

58. Սակայն, Դատարանը նշում է, որ իրավական որոշակիության և օրինական հանրային վստահության պաշտպանման պահանջից չի բխում, որ ցանկացած ձեռք բերված իրավունք պետք է ստանա նախադեպային բնույթ (տե՛ս Ունեդիկն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռը, № 20153/04, կետ 74, 2008թ դեկտեմբերի 18): Նախադեպային իրավունքի ձևավորումն ինքնին չի հակասում արդարադատության լիարժեք իրականացմանը, քանի որ դինամիկ և էվոլյուցիոն մոտեցման ապահովման ձախողումը կկանգնեցնեք բարեփոխմանը կամ բարելավմանը խոչընդոտելու վտանգի առջև (տե՛ս Աթանասովսկին ընդդեմ «Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության» գործով վճիռը, № 36815/03, կետ 38, 2010թ հունվարի 14):

## **2. Վերոհիշյալ սկզբունքների կիրառումը սույն գործում**

( a ) Նախնական դիտարկումներ

59. Դատարանն ի սկզբանե գտնում է, որ սույն գործը տարբերվում է նախկինում իր կողմից քննված գործերից նրանով, որ այստեղ գործ ունենք ոչ թե՛ դատական համակարգի նույն ճյուղի գերագույն ատյանների դատարանների նախադեպային իրավունքում հակասական որոշումների հետ, այլ ավելի շատ երկու ստորակարգորեն չկապված, տարբեր և անկախ դատարանների վճիռների միջև կոնֆլիկտ հետ:

60. Ուստի այն գտնում է, որ, ձևավորվելով սույն գործից հիմնովին տարբերվող համատեքստում, չափանիշներն ու սկզբունքները, որ ստեղծվել են վերոհիշյալ նախադեպային իրավունքում, չեն կարող, որպես այդպիսին, կիրառվել սույն գործում, որը, չնայած վերաբերում է բողոքի մի տեսակի, որը քննելու հնարավորություն Դատարանն



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:

Նեղոյեցի Սահիւնը և Պերիիան Սահիւնը ընդդէմ Թուրքիայի գործով վճիռ

արդէն իսկ ունեցել է, այնուամենայնիվ առաջ է քաշում մի նոր իրավական հարց: Դրանք, այնուամենայնիվ, կարող են ուղեցույց հանդիսանալ սույն գործի հանգամանքները գնահատելիս: Հետևաբար, դատարանը սկզբում կորոշի՝ արդյոք սույն գործում առկա են եղել հակասող դատական որոշումներ: Եթէ գտնի, որ եղել են, այնուհետև կքննի՝ արդյոք սույն գործի տվյալ հանգամանքների լույսի ներքո այդ որոշումները խախտել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը:

( b ) Արդյոք առկա են եղել հակասող որոշումներ

61. Դատարանն ընդգծել է, որ երկու վեճերի քննումը տարբեր տեսանկյուններից չի կարող հանգեցնել նախադեպային իրավունքների հետ կապված հակասության, երբ այն արդարացվում է քննվող փաստական հանգամանքների տարբերությամբ (տե՛ս Էրոլ Ուկարն ընդդէմ Թուրքիայի գործով վճիռը (որոշում), № 12960/05, 2009թ սեպտեմբերի 29): Սույն գործում դատարանին ներկայացված ապացույցներից պարզ է դառնում, որ տարբերությունը, որի առիթով դիմումատուները բողոքել են, առկա է ոչ թէ նույն ներպետական դատարանների կողմից քննված փաստական հանգամանքներում, այլ նյութական իրավունքի կիրառման և դրա արդյունքում առաջացած *res judicata*-ում:

62. Այս առումով Դատարանը նշել է, որ կողմերը ներկայացրել են ազգային դատարանների կողմից կայացված մի քանի որոշումներ, որոնք վերաբերում էին դիմումատուների որդու հետ նույն ավիավթարի ժամանակ գոհված զինծառայողների ընտանիքներին: Ընթերցելով այդ որոշումները՝ այն նախ և առաջ նշել է, որ գործին առնչվող զինծառայողները բաժանվում են երկու կատեգորիաների. նրանք, ում առաքելությունը ահաբեկչության դեմ պայքարելն էր, և ինքնաթիռի անձնակազմը (տե՛ս վերը՝ կետ 17 և կետեր 25-26):

63. Այնուհետև այն նշել է, որ ընդհանուր իրավասության վարչական դատարաններ ներկայացված գործերը, որոնց վրա դիմումատուները հիմնել էին իրենց պահանջները, առնչվում էին այս վթարի գոհերի ընտանիքների կողմից ներկայացված բողոքներին՝ ընդդէմ Թուրքիայի թոշակային հիմնադրամի որոշումների, որոնք, *inter alia*, մերժել էին № 3713 օրենքին համաձայն իրենց հասանելի թոշակը:



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:

Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

64. Եվ վերջում, դատարանը, հիմնվելով գործին առնչվող առկա փաստաթղթերի վրա, գտնում է, որ գոհվածների ընտանիքների կողմից հարուցված 14 գործերն ըստ էության քննվել են ընդհանուր իրավասության վարչական դատարանների կողմից, որոնք հաստատել են ավիավթարի և ահաբեկչության դեմ պայքարի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը. sine qua non պայման № 3713 օրենքով սահմանված իրավունքից օգտվելու համար՝ առանց տարբերակումներ դնելու, թե ինչ տեսակ պարտականություններ է կատարել հանգուցյալ զինծառայողը (տե՛ս վերը՝ կետեր 25-26):

65. Այսպիսով, ընդհանուր իրավասության վարչական դատարանները վճիռը կայացրել են հոգուտ դիմումատուների. № 3713 օրենքի կիրառման պայմանների նրանց մեկնաբանումը տարբերվում էր մեկնաբանումից, որն արել էր Գերագույն ռազմական վարչական դատարանը, որը դիմումատուների գործում ոչ մի այդպիսի պատճառահետևանքային կապ չէր գտել և մերժել էր նրանց՝ թոշակային հիմնադրամի որոշումը վերացնելու վերաբերյալ դիմումը (տե՛ս վերը՝ կետ 16):

66. Մեկնաբանումների այս տարբերությունը հանգեցրել է էապես նմանվող գործերի նկատմամբ երկու տարբեր դատարանների կողմից տարբեր իրավական մոտեցումների: Ուստի, ընդհանուր իրավասության վարչական դատարաններն (Անկարայի վարչական դատարան և Գերագույն վարչական դատարան) ու Գերագույն ռազմական վարչական դատարանը հանգել են միմյանց բոլորովին հակասող եզրակացությունների: Ավելին, Կառավարությունը ընդունել է այս տարբեր մեկնաբանումների գոյությունը (տե՛ս վերը՝ կետ 47): Հարկ է նշել, որ Գերագույն ռազմական վարչական դատարանը դիմումատուների գործով վճիռը հրապարակելիս ոչ մի տարբերություն չի նշել, որով կարելի կլիներ այս գործը տարբերակել ընդհանուր իրավասության վարչական դատարանների կողմից քննված մյուս գործերից (տե՛ս վերը՝ կետ 16):

67. Հետևաբար, Դատարանն ակնհայտորեն կանգնած է մի շատ եզակի գործի քննության առջև, որտեղ նույն պատահարի, այն է՝ ավիավթարի հանգամանքներն ու հետևանքները ներպետական դատարանների կողմից տարբեր ձևով են մեկնաբանվել: Ուստի պետք է հիշել, որ միայն նախադեպային իրավունքի կոնֆլիկտ գտնելը բավարար չէ Կոնվենցիայի 6-րդ կետի խախտում արձանագրելու համար: Դատարանը պետք է չափի



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով  
վճիռ

հակասող նախադեպերի ազդեցությունը արդար դատաքննության սկզբունքի տեսանկյունից,  
մասնավորապես իրավական որոշակիության սկզբունքի չափանիշի առումով:

( c ) Արդյոք հակասող որոշումները հանգեցնում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին  
կետի խախտման

68. Նախ և առաջ, դատարանը գտնում է, որ սույն գործի հանգամանքներում հակասող  
որոշումների հարցը կապված է Թուրքիայի դատական համակարգի հենց կառուցվածքի հետ,  
որտեղ ընդհանուր իրավասությամբ օժտված ընդհանուր իրավասության վարչական  
դատարանները գոյակցում են ռազմական վարչական դատարանի հետ, որն օժտված է  
հատուկ իրավասությամբ (տե՛ս վերը՝ կետեր 20-21 և կետ 45): Սա, սակայն, Եվրոպայում  
առկա տարբեր իրավական համակարգերի օրինակներից միայն մեկն է, և դրանք  
ստանդարտացնելը Դատարանի խնդիրը չէ (տե՛ս, *mutatis mutandis*, Տաքսկետն ընդդեմ  
Բելգիայի գործով վճիռը, № 926/05, կետ 83, 2010թ նոյեմբերի 16):

69. Ավելին, անհատական դիմումներով հարուցված գործերում Դատարանի խնդիրը  
գործին առնչվող օրենսդրության և վիճարկվող պրակտիկայի աբստրակտ վերանայումը չէ:  
Փոխարենը, այն պետք է հնարավորինս սահմանափակվի իրեն ներկայացված գործով  
բարձրացած հարցերի քննմամբ՝ առանց կորցնելու ընդհանուր համատեքստը (տե՛ս N. C.-ին  
ընդդեմ Իտալիայի գործով վճիռը, № 24952/94, կետ 56, ՄԻԵԿ 2002 X, և Տաքսկետ, մեջբերված  
վերևում, կետ 83):

70. Ուստի, այստեղ Դատարանի խնդիրը ոչ թե, *in abstracto*, վերանայելն է Թուրքիայի՝  
իր երկու տեսակի վարչական դատարաններով դատական համակարգի  
համատեղելիությունը Կոնվենցիայի հետ, այլ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում  
ամրագրված արդար դատաքննության իրավունքի վրա՝ առաջացած նախադեպային  
իրավունքի կոնֆլիկտի ազդեցության, *in concreto*, որոշելն է ( տե՛ս, օրինակ և *mutatis  
mutandis*, Պադովանին ընդդեմ Իտալիայի գործով վճիռը, 1993թ փետրվարի 26, շարք A № 257-  
B):

71. Դատարանը նախ և առաջ գտնում է, որ № 3713 օրենքի 21-րդ կետի մեկնաբանման  
վերաբերյալ վիճարկվող հակասող դատական որոշումները եղել են հիմնականում նույն



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

հարցեր բարձրացնող գործերում ընդհանուր իրավասության վարչական և Գերագույն ռազմական վարչական դատարանի կողմից կատարված միաժամանակյա միջամտության արդյունք (տե՛ս վերը՝ կետեր 62-66): Սա ի հայտ է բերում իրավասության կոնֆլիկտ երկու տեսակի դատարանների միջև, որոնք նույն իրավական հարցի վերաբերյալ զուգահեռաբար վճիռ են կայացրել:

72. Ուստի դատարանը համաձայն է Պալատի եզրակացության հետ, ըստ որի հակասող որոշումները, որոնց վերաբերյալ բողոք են ներկայացրել դիմումատուները, առաջացել են այս տարբեր դատարանների՝ իրենց համապատասխան իրավասության սահմանները հարգել չկարողանալու պատճառով ( տե՛ս Պալատի վճիռը, կետ 57 ):

73. Այնուհետև, անդրադառնալով Կառավարության այն փաստարկին, ըստ որի Գերագույն ռազմական վարչական դատարանն, անկասկած, սույն գործը քննելու իրավասություն է ունեցել (տե՛ս վերը կետ 45)՝ Դատարանը նշել է, որ Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանը, որը ստեղծվել է, *inter alia*, լուծելու ընդհանուր իրավասության, վարչական և ռազմական դատարանների միջև իրավասության վերաբերյալ առաջացած վեճերը (տե՛ս վերը՝ կետեր 22 և 24), հնարավորություն է ունեցել լուծել ընդհանուր իրավասության վարչական դատարանների և Գերագույն ռազմական վարչական դատարանի իրավասության շրջանակների որոշման հարցը:

74. Այդպիսով, այն գտել է, որ Գերագույն ռազմական վարչական դատարանն իրավասու է քննել ռազմական թոշակների և նպաստների վերաբերյալ գործերը (տե՛ս վերը՝ կետեր 31-32): Եվ իսկապես, երբ Անկարայի վարչական դատարանի 4-րդ պալատը հայտարարել է, որ դիմումատուների կողմից հարուցված գործի քննությունը դուրս է իր իրավասությունից և ավելի շուտ ենթակա է Գերագույն ռազմական վարչական դատարանի կողմից քննման (տե՛ս վերը կետ 14), այն հղում է կատարել Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի կողմից՝ 2001թ-ի մայիսի 14-ին կայացված վճռին (տե՛ս վերը՝ կետ 31):

75. Այս կապակցությամբ Պալատը գտել է, որ Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանը օգնել է կարգավորել ընդհանուր իրավասության դատարանների և ռազմական վարչական դատարանի՝ իրենց իրավասության շրջանակի վերաբերյալ դիրքորոշումների տարբերությունը՝ սկզբունքորեն վերջ դնելով ընդհանուր իրավասության վարչական



Նեջդետ Սահիևը և Պերիիան Սահիևը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

դատարանների միջամտությանը այն ոլորտներում, որոնք մտնում են ռազմական վարչական դատարանի իրավասության շրջանակի մեջ (տե՛ս Պալատի վճիռը, կետեր 57-58):

76. Սակայն Մեծ պալատը համաձայն չէ այս եզրակացությունների հետ: Անդրադառնալով կողմերի կողմից ներկայացված ապացույցներին՝ այն գտնում է, որ, չնայած Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի միջամտությանը և վերջինիս որոշմանը առ այն, որ Գերագույն ռազմական վարչական դատարանն իրավասու է քննել սույն գործի նման գործեր, ընդհանուր իրավասության վարչական դատարանները շարունակել են ընդունել դիմումատուների կողմից հարուցված գործին նման գործեր և դրանք ըստ էության քննել (տե՛ս վերը՝ կետեր 25-27):

77. Համաձայն Մեծ պալատի առջև լսման ընթացքում Կառավարության ներկայացրած բացատրությունների՝ եթե Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի կողմից կայացված՝ իրավասության վերաբերյալ «պարտադիր որոշումները» պարտավորեցնող են, ապա մյուս որոշումները պարզապես նախադեպերի արժեք և ուժ ունեն՝ նպատակաուղղված լինելով ուղղորդել ներպետական դատարաններին իրենց քննարկումների ժամանակ: Որոշումը «պարտադիր» է, երբ այն փաստացիորեն սահմանվում է որպես այդպիսին:

78. Սույն գործում դատարանը նշում է, որ Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի վճիռները, որոնց հղում է կատարել Կառավարությունը (տե՛ս վերը՝ կետեր 44-45), և որոնք հաստատել են Գերագույն ռազմական վարչական դատարանի իրավասությունը, պարտադիր որոշումներ չեն եղել, և որ դրանք չեն կարողացել միայն իրենց համոզման ուժով հարկադրվել բոլոր ընդհանուր իրավասության վարչական դատարանների վրա, որոնք շարունակել են ընդունել և քննել դիմումատուների կողմից հարուցված գործերին նման գործեր (տե՛ս վերը՝ կետեր 25-27):

79. Այնուհետև, կարևորություն չտալով այն փաստին, թե ինչ կշիռ է ընդհանուր իրավասության դատարանը տվել Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի կողմից ընդունված վճիռներին, Դատարանն ընդգծում է, որ, ամեն դեպքում, Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի դերը չի կայանում նախադեպային իրավունքի կոնֆլիկտների լուծման մեջ: Չնայած այն լիազորված է լուծել տարբեր դատարանների վճիռների միջև առաջացած կոնֆլիկտները, այն միջամտում է միայն բացառիկ իրավիճակներում, երբ վճիռներն այնքան անհամատեղելի են, որ դրանց իրականացումը



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:

Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով  
վճիռ

կհանգեցնեք շահագրգիռ կողմի համար արդարադատության ոտնահարմանը (տե՛ս վերը՝  
կետեր 24 և 30), իրավիճակ, որը չի առաջանում սույն գործում: Ուստի դիմումատուների  
կողմից հարուցված գործում նրա միջամտությունն անհիմն է:

80. Դատարանն ընդգծում է, որ ինքն արդեն նշել է, որ նախադեպային իրավունքի  
կոնֆլիկտները որպես այդպիսին ճանաչվելուց հետո սկզբունքորեն պետք է լուծվեն  
հաջորդիվ արվող մեկնաբանությունների և նախադեպային իրավունքի ներդաշնակեցման  
միջոցով, որը կատարվում է այդպիսի իրավասությամբ օժտված մեխանիզմների միջոցով  
(տե՛ս Բեյան (№ 1), մեջբերված վերևում, կետ 37 և 39): Սակայն, հարկ է նշել, որ այս  
սկզբունքները սահմանվել են այն գործերում, որտեղ մեկնաբանությունների  
տարբերությունը, որ քննել է Դատարանը, առաջ են եկել դատական համակարգի նույն  
ճյուղի շրջանակներում այն իրավական դրույթների առնչությամբ, որոնց վերաբերյալ  
Գերագույն դատարանը կարող է գործի դնել իր միավորող ուժը ( տե՛ս վերը՝ կետ 59, տե՛ս  
նաև Բեյան (№ 1), մեջբերված վերևում, կետ 37, ու Շվարցկոպֆը և Տոսիկը, մեջբերված  
վերևում):

81. Չնայած այս նկատառումները վերաբերում են այն հակասող որոշումներին, որոնք  
կայացվել են ստորակարգային դատական համակարգի ներսում, դրանք չեն կարող առնչվել  
սույն գործին: Դատարանը գտնում է, որ ներպետական իրավական համատեքստը, որը  
բնորոշվում է, ինչպես սույն գործում, մի քանի գերագույն դատարանների գոյությամբ, որոնք  
ենթակա չեն ընդհանուր դատական հիերարխիային, այն չի կարող պահանջել, որ գործեն  
դատարանների կողմից ընդունված մոտեցումների ուղղահայաց վերանայման  
մեխանիզմներ: Այսպիսի պահանջ ներկայացնելը դուրս է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին  
կետում ամրագրված արդար դատաքննության պահանջների սահմաններից:

82. Ավելին, Դատարանը նշում է, որ այն փաստը, որ չկա գերագույն դատարանների,  
այս դեպքում Գերագույն վարչական դատարանի և Գերագույն ռազմական վարչական  
դատարանի համար նախատեսված ընդհանուր կարգավորման մարմին, որն ի վիճակի  
կլիներ հաստատել մեկնաբանություններ, որոնց պետք է հետևեն այս դատարանները, չի  
հանդիսանում Թուրքիայի դատական համակարգի առանձնահատկություն: Մի շարք  
եվրոպական երկրներ, որոնցում առկա են երկու և ավելի գերագույն դատարաններ, չունեն





Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով  
վճիռ

նման մարմին (տե՛ս վերը՝ կետ 34): Սակայն, սա չի կարող, որպես այդպիսին, համարվել  
Կոնվենցիայի խախտում:

83. Այնուհետև դատարանը գտնում է, որ Թուրքիայի դատական համակարգի նման  
դատական համակարգում, որը բաղկացած է դատարանների մի շարք տարբեր ճյուղերից, և  
որտեղ կողք կողքի գործում են մի քանի գերագույն դատարաններ, որոնցից պահանջվում է  
օրենքի մեկնաբանություններ տալ միևնույն ժամանակ և զուգահեռաբար, օրենքի կիրառման  
միասնականության հասնելը կարող է ժամանակ պահանջել, և ուստի, հակասող  
նախադեպային իրավունքի ժամանակահատվածներ կարող են հանդուրժվել՝ առանց  
վնասելու իրավական որոշակիությանը:

84. Քանի որ նախադեպային իրավունքը անփոփոխ չէ, այլ ընդհակառակը՝ ըստ  
էության էվոլյուցիոն բնույթ ունի, Դատարանը գտնում է, որ արդարադատության լավ  
իրականացման սկզբունքը չպետք է հասկանալ որպես նախադեպային իրավունքին  
հետևելու խիստ պահանջի պարտադրում (տե՛ս Յունիդեկ, մեջբերված վերևում, կետ 73, և  
Աթանասովսկի, մեջբերված վերևում, կետ 38): Սակայն, Դատարանի պարտականությունն է  
երաշխավորել, որ հետևեն այս սկզբունքին, երբ այն գտնում է, որ դատավարության  
արդարությունը կամ օրենքի գերակայությունը պահանջում են, որ այն միջամտի՝ վերջ  
դնելու նույն հարցի վերաբերյալ տարբեր դատարանների կողմից հրապարակված հակասող  
վճիռների արդյունքում առաջացած անորոշությանը: Իրավական որոշակիությանը, որին այն  
այնուհետև ձգտում է հասնել, պետք է հետամուտ լինել՝ պատշաճ հարգանք ցուցաբերելով  
ներպետական դատարանների՝ որոշում կայացնելու ինքնավարության և անկախության  
նկատմամբ և հետևելով Կոնվենցիայի հիմքում ընկած լրացման սկզբունքին:

85. Այս կապակցությամբ Դատարանն ընդգծում է, որ մեկնաբանությունը կազմում է  
դատական իշխանության աշխատանքի անբաժանելի մասը: Որքան էլ հստակ սահմանված  
լինի իրավական դրույթը, դատական մեկնաբանության տարրի առկայությունն  
անխուսափելի է (տե՛ս Բասկայան և Օկսուոզլուն ընդդեմ Թուրքիայի, № 23536/94 և №  
24408/94, կետ 39, ՄԻԵԴ 1999-IV): Որոշելը՝ ինչ օրենք կիրառել և ինչ պայմաններում,  
կազմում է օրենքի այս անհատական մոտեցման մասը:

86. Սա նշանակում է, որ երկու դատարաններ՝ յուրաքանչյուրն օժտված իր  
իրավասության շրջանակով, քննելով տարբեր գործեր, կարող են նմանատիպ փաստական



## Նեջդետ Սահիևը և Պերիիան Սահիևը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

հանգամանքներում առաջացած նույն իրավական հարցերի վերաբերյալ հանգել տարբեր, բայց, այնուամենայնիվ, ռացիոնալ և խելամիտ եզրակացությունների: Պետք է ընդունել, որ մոտեցման տարբերությունները, որ կարող են առաջանալ դատարանների միջև, պարզապես իրավական դրույթների մեկնաբանման և դրանք իրենց կողմից մեկնաբանման համար նախատեսված նյութական իրավիճակներին հարմարեցնելու արդյունք են:

87. Այս տարբերությունները հանդուրժվում են այն դեպքում, երբ ներպետական իրավական համակարգն ի վիճակի է ընդունել դրանք: Սույն գործում Դատարանը գտնում է, որ համապատասխան գերագույն դատարանները՝ Գերագույն վարչական դատարանը և Գերագույն ռազմական վարչական դատարանը, կարող են իրենք կարգավորել տարբերությունները՝ որոշելով հետևել նույն մոտեցմանը կամ հարգելով իրենց համապատասխան իրավասության շրջանակների սահմանները և կանխելով օրենքի նույն ոլորտում երկուսի միջամտությունը:

88. Ճիշտ այնպես, ինչպես Դատարանը չպետք է հանդես գա որպես 3-րդ կամ 4-րդ աստյան և վերանայի ներպետական դատարանների՝ իրավական դրույթների մեկնաբանման և դրա արդյունքում առաջացած անհամատեղելիության վերաբերյալ ընտրությունները, այն, ինչպես ընդգծել է Դատարանը, չպետք է նաև միջամտի միայն այն պատճառով, որ առկա են հակասական որոշումներ:

89. Դատարանի համար այն դեպքերում, երբ չկա կամայականությունների վերաբերյալ որևէ ապացույց, այսպիսի հակասող որոշումների առկայության և ազդեցության քննումը չի նշանակում ներպետական դատարանների կողմից ընտրված մոտեցման խելամտության քննում (տե՛ս Վինցիչ և այլոք, մեջբերված վերևում, կետ 56. Իսիկն ընդդեմ Թուրքիայի գործով որոշումը, № 35224/05, 2009թ հունիսի 16. և Իվանովը և Դմիտրովն ընդդեմ «Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության» գործով վճիռը, № 46881/06, կետ 32, 2010թ հոկտեմբերի 21): Ինչպես նշվել է վերը (տե՛ս 50-րդ կետը), նրա՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դերը սահմանափակվում է այն գործերով, որոնցում վիճարկվող որոշումներն ակնհայտորեն կամայական են:

90. Ուստի, չնայած Գերագույն ռազմական վարչական դատարանի՝ № 3713 օրենքի 21-րդ կետի մեկնաբանումն անբարենպաստ էր դիմումատուների համար, այդ մեկնաբանությունը, որքան էլ որ այն անարդար թվա ընդհանուր իրավասության վարչական

Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

դատարանների կողմից կայացված որոշումների համեմատ, ինքնին չի խախտում Կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

91. Հարկ է նաև նշել Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի եզրակացության լույսի ներքո, համաձայն որի Գերագույն ռազմական վարչական դատարանն իրավասու է քննել սույն վեճի նման վեճեր, որ սույն գործի հանգամանքներում Անկարայի վարչական դատարանի 4-րդ պալատի որոշումը՝ առ այն, որ ինքն իրավասու չէ քննել դիմումատուների գործը, բոլորովին էլ կամայական չէ:

92. Դիմումատուները չեն կարող պնդել, որ արդարադատություն չի իրականացվել այն պատճառով, որ իրենց գործը քննել է Գերագույն ռազմական վարչական դատարանը և որ վերջինս հանգել է տվյալ եզրակացության: Գերագույն ռազմական վարչական դատարանի՝ դիմումատուների գործով որոշումը կայացվել է իրավասության շրջանակի սահմաններում, և այնտեղ չկա մի բան, որն ինքնին կարդարացներ Դատարանի միջամտությունը:

93. Հարկ է նշել, որ դիմումատուների գործի վերաբերյալ կայացված վճիռները եղել են օրենքի և փաստերի առումով պատշաճորեն պատճառաբանված (տե՛ս վերը՝ կետեր 16 և 19), և որ Գերագույն ռազմական վարչական դատարանի մեկնաբանությունը այն փաստերի վերաբերյալ, որոնք ներկայացվել էին դատարանին քննման համար, չի կարող համարվել կամայական, ոչ խելամիտ կամ ունակ ազդելու դատաքննության արդարության վրա. դա պարզապես ներպետական օրենքի կիրառման հարց է:

94. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Դատարանն ընդգծում է, որ այն չպետք է անհիմն կերպով միջամտի երկրների կողմից իրենց դատարանների գործառնությունների որոշման, ինչպես նաև դատական համակարգերի կազմակերպման գործին: Նրանց որոշումների միասնականության պատասխանատվությունը հիմնականում ընկած է ներպետական դատարանների վրա, և Դատարանի կողմից ցանկացած միջամտություն պետք է լինի միայն բացառիկ իրավիճակներում:

95. Սույն գործում Դատարանը գտնում է, որ տվյալ հանգամանքներում միջամտության կարիք չկա, և որ ինքը չպետք է գտնի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի vis-à-vis նախադեպային իրավունքի ենթադրյալ կոնֆլիկտի լուծումը: Ամեն դեպքում, Դատարանին ներկայացվող անհատական դիմումները չեն կարող օգտագործվել որպես միջոց՝ ներպետական իրավունքում առաջացած նախադեպային իրավունքի կոնֆլիկտների հետ



Նեղոյեցի Սահիւնը և Պերսիան Սահիւնը ընդդէմ Թուրքիայի գործով վճիռ

առնչվելու կամ դրանք վերացնելու համար, որոնք կարող են առաջանալ ներպետական իրավունքում կամ էլ որպէս վերանայման մեխանիզմ՝ տարբեր ներպետական դատարանների որոշումների միջև հակասությունները շտկելու համար:

96. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

ՈՒՍՏԻ, ԴՍՏԱՐԱՆԸ,

տաս ձայն ընդդէմ յոթի, գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Կազմվել է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակվել է դոնբաց լսումների ժամանակ Ստրասբուրգում, ՄԻԵԴ-ի շենքում, 2011թ-ի հոկտեմբերի 20-ին:

Մաիքլ Օ'Բոյլ

Նիկոլաս Բրատգա

Մատենավարի տեղակալ

Նախագահող

Համաձայն Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի Կանոնների 74-րդ կանոնի 2-րդ կետի՝ դատավորներ Բրատգայի, Կասադեվալի, Վայիչի, Սպիելմանի, Ռոզակիսի, Կովլերի և Միյովիչի առանձին կարծիքները կցված են դատավճռին:

N. B.

M. O. B.

Դատավորներ Բրատգայի, Կասադեվալի, Վայիչի, Սպիելմանի, Ռոզակիսի, Կովլերի և Միյովիչի՝ մեծամասնության որոշման հետ չհամաձայնվող կարծիքը



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI. INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:

# Նեչդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

(Թարգմանություն)

1. Ի տարբերություն մեծամասնության՝ մենք գտնում ենք, որ սույն գործում տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

2. Իրավիճակը ճիշտ գնահատելու համար ի սկզբանե նշենք, որ սույն գործի հիմքում ընկած չէ այն փաստը, որ Գերագույն ռազմական վարչական դատարանի՝ № 3713 օրենքի 21-րդ կետի մեկնաբանումը անբարենպաստ է եղել դիմումատուների համար: Ոչ էլ գործն առնչվում է այն հարցի հետ, թե արդյոք Անկարայի վարչական դատարանի 4-րդ պալատի որոշումը առ այն, որ այն իրավասու չէ քննել դիմումատուների գործը, եղել է կամայական, թե ոչ, կամ թե արդյոք դիմումատուների գործով վճիռները պատշաճորեն պատճառաբանված էին փաստերի և իրավունքի տեսանկյունից (վճռի 90-93-րդ կետերը): Հակառակ վճռում առկա առաջարկությունների՝ գործը նաև չի վերաբերում պարզապես «երկրների կողմից իրենց դատական իշխանության գործառույթների որոշմանը կամ ... իրենց դատական համակարգերի կազմակերպմանը» (կետ 94). ըստ մեզ՝ այն ավելի շատ վերաբերում է Թուրքիայի դատական համակարգի «աղաղակող սխալ գործունեությանը», որի արդյունքում խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

3. Իրականում, նախադեպային իրավունքի ներդաշնակեցման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը ոչ միայն առաջացնում, այլև, և որն ավելի վատ է, երկարաձգում է ընդհանուր իրավասության և ռազմական վարչական դատարանների միջև նախադեպային իրավունքի կոնֆլիկտները, որոնք, սույն գործում, հանգեցրել են հետևանքների, որոնք թողնում են «կամայականության» տպավորություն: Ավելին, նախադեպային իրավունքի կոնֆլիկտները շարունակում են գոյություն ունենալ վարչական դատարանների համակարգի ներսում:

4. Մենք ընդգծում ենք, որ, ինչպես, որ սահմանված է վճռի 57-րդ կետում, արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որը հռչակում է, որ օրենքի գերակայությունը կազմում է պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասը: Օրենքի գերակայության հիմնարար կողմերից մեկը իրավական որոշակիության սկզբունքն է (տե՛ս Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով վճիռը, № 28342/95, կետ 61, ՄԻԵԴ 1999 VII), որը, inter alia, երաշխավորում է որոշակի

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

իրավական կայունությունն իրավական իրավիճակներում և խթանում է դատարաններում հանրային վստահությանը (տե՛ս, mutatis mutandis, Ստեֆանիկա և այլոք, № 38155/02, կետ 38, 2010թ նոյեմբերի 2): Հակասող դատական որոշումների երկարաձգումը, ընդհակառակը, կարող է ստեղծել իրավական անորոշության վիճակ, որը հավանական է, որ նվազեցնի դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունը, վստահություն, որն ակնհայտորեն հանդիսանում է օրենքի գերակայության վրա հիմնված պետության կարևոր բաղադրիչներից մեկը (տե՛ս Պադուրարուն ընդդեմ Ռումինիայի գործով վճիռը, № 63252/00, կետ 98, ՄԻԵԴ 2005-XII (հատվածներ). Վինցիչը և այլոք ընդդեմ Սերբիայի գործով վճիռը, № 44698/06 և այլն, կետ 56, 2009թ դեկտեմբերի 1. և Ստեֆանիկան և այլոք, մեջբերված վերևում, կետ 38):

5. Ճիշտ է, որ դատարանների անկախությունը, որին ապավինում է Կառավարությունը (վճռի 43-րդ կետը), և դրանից հետևող դատարանների՝ որոշում կայացնելու ինքնավարությունը կարող են բացատրել դատական համակարգի տարբեր մակարդակներում նույն տեքստի վերաբերյալ արված մեկնաբանությունների տարբերությունը: Մեր կարծիքով, սակայն, այսպիսի մեկնաբանումները չպետք է հանրությանը կանգնեցնեն իրավական անորոշության իրավիճակում, որտեղ գործի արդյունքը կախված է մեխանիզմից, որն ի վիճակի չէ երաշխավորել դատական որոշումների հետևողականություն:

Ներպետական իրավական համակարգի՝ իրավական իրավիճակներում կայունություն և դատական որոշումների հետևողականությունն պահպանելու կարողությունը վճռորոշ նշանակություն ունի արդարադատության իրականացման նկատմամբ հանրային վստահության պահպանման գործում:

6. Սույն գործում դիմումատուները նախ կանգնել են դատական համակարգի նույն ճյուղում առկա ակնհայտ անհետևողականության առջև: Այս առումով մենք ուշադրություն ենք հրավիրում այն փաստի վրա, որ դիմումատուները բողոքարկել են Անկարայի վարչական դատարանի 4-րդ պալատի՝ իրենց գործը քննելու իրավասություն չունենալու վերաբերյալ որոշումը, մինչդեռ նույն դատարանի այլ պալատներ գտել են, որ իրավասու են քննել նմանատիպ գործեր (վճռի 42-րդ կետը): Նույն վարչական դատարանի ներսում մի շարք դատական կառույցների ինքնավարությունը և տարբեր դատական կառույցներին

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



## Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով Վճիռ

գործերի հանձնարարումը հանգեցրել է հակասական նախադեպային իրավունքի, որը հանդես է գալիս դատարանի իրավասության վերաբերյալ երկու հակասող մեկնաբանությունների ձևով:

7. Իսկապես, արձանագրվել է երեք դեպք, որոնցից մեկը սույն գործն է, երբ Անկարայի վարչական դատարանի 4-րդ և 5-րդ պալատները գտել են, որ իրավասու չեն քննել № 3713 օրենքի 21-րդ հոդվածով կարգավորվող իրավունքների վերաբերյալ գործեր (վճռի 14-րդ, 28-րդ և 29-րդ կետեր)՝ գտնելով, որ այսպիսի գործերը Գերագույն ռազմական վարչական դատարանի կողմից քննվելու ենթակա գործեր են: Այս մոտեցմանը չեն հետևել նույն դատարանի այլ պալատներ, որոնք համաձայնել են քննել 2001թ-ի մայիսի 16-ին տեղի ունեցած նույն ավիավթարի ժամանակ մահացած զինծառայողների ընտանիքների կողմից հարուցված 14 գործ և վճիռները կայացրել են հոգուտ նրանց (վճռի 25-27-րդ կետեր). այդ գործերը նման էին դիմումատուների գործին: Սա գործի հիմնարար կողմերից է: Կասկած չկա, որ նախադեպային իրավունքի համատեքստը, որում լսվել է դիմումատուների գործը, դրոշմված էր Անկարայի վարչական դատարանի տարբեր պալատների՝ ռազմական թոշակի իրավունքի վերաբերյալ գործերում իրավասություն ունենալու հարցի վերաբերյալ ցուցաբերած տարբեր մոտեցումներով:

8. Մեր կարծիքով դատարանի՝ նույն պատահարի (այս դեպքում ավիավթարը, որի արդյունքում մահացել են մի շարք մարդիկ) արդյունքում առաջացած հիմնականում նույն հարցերը քննելու իրավասության վերաբերյալ մոտեցումների անհամապատասխանությունը հիմնարարորեն խնդրահարույց է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ:

9. Կարևոր է հիշել, որ իրավասության հարցը որոշիչ է գործի արդյունքի համար. ընդհանուր իրավասության վարչական դատարանների որոշումների մեծ մասը ճանաչել են ավիավթարի և ահաբեկչության դեմ պայքարի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ուստի մեծ հավանականություն կա, որ եթե նրանց գործը չվերաուղորդվեր դեպի Գերագույն ռազմական վարչական դատարան, ապա դիմումատուները, ինչպես ավիավթարի զոհերի ընտանիքներից որոշները, հաջողության կհասնեին իրենց դատական գործում: Գերագույն ռազմական վարչական դատարանի՝ 2001թ-ի մայիսի 16-ին տեղի ունեցած ավիավթարի հանգամանքների մեկնաբանման ձևը հանգեցրել է սույն գործի՝ այլ



## Նեղդետ Սահիևը և Պերիհան Սահիևը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

նմանատիպ դիմումների վրա հիմնված գործերի քննությունից տարբերվող քննության: Դիմումատուները տեղեկացրել են ռազմական դատարանին նմանատիպ գործերի վերաբերյալ ընդհանուր իրավասության վարչական դատարանների դիրքորոշման մասին (վճռի 15-րդ և 18-րդ կետեր), բայց ռազմական դատարանը բոլորովին անտեսել է այդ դիրքորոշումը՝ առանց պատճառաբանության և հաշվի չառնելով տարբերության վտանգը, նույնիսկ եթե որոշումները կայացվել են միաժամանակ: Այն նաև չի բացատրել, թե փաստական ինչ տարբերություններ են սույն գործը տարբերում այն գործերից, որոնց հղում են կատարել դիմումատուները (կետեր 16 և 66): Արդյունքում նույն փաստական իրավիճակը և նույն իրավական դրույթները տարբեր կերպ են մեկնաբանվել երկու տեսակի դատարանների կողմից:

10. Ճիշտ է, որ Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանը, որը ստեղծվել է, *inter alia*, կարգավորելու ընդհանուր իրավասության, վարչական և ռազմական դատարանների միջև առաջացած կոնֆլիկտները (վճռի 22-րդ և 24-րդ կետերը), առիթ է ունեցել լուծելու ընդհանուր իրավասության վարչական դատարանների և Գերագույն ռազմական վարչական դատարանի իրավասության շրջանակների որոշման հարցը և սահմանելու չափանիշներ՝ վերջին դատարանի իրավասությունը հաստատելու համար (կետեր 31-32): Այսպիսով, Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանը գտել է, որ Գերագույն ռազմական վարչական դատարանն իրավասու է քննել ռազմական թոշակների և նպաստների վերաբերյալ գործերը (կետեր 31-32): Եվ իսկապես, երբ Անկարայի վարչական դատարանի 4-րդ պալատը հռչակել է, որ դիմումատուների կողմից իրեն ներկայացված գործի քննությունն իր իրավասությունից դուրս է և Գերագույն ռազմական վարչական դատարանի իրավասությանն է պատկանում, այն հղում է կատարել Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի 2001թ-ի մայիսի 14-ին կայացված վճռին (կետ 31):

11. Սակայն երկու դատարանների միջև առաջացած կոնֆլիկտի վերաբերյալ Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի որոշումը տեսական և վերացական էր:

12. Չնայած Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի միջամտությանը և նրա կողմից Գերագույն ռազմական վարչական դատարանի՝ սույն գործին նման գործեր քննելու իրավասության հաստատմանը՝ ընդհանուր իրավասության վարչական դատարանները շարունակել են դիմումատուների գործին նման գործեր ընդունել և քննել դրանք ըստ էության

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:





Նեջդետ Սահինը և Պերիհան Սահինը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

(կետեր 25-27): Այս համատեքստում Կառավարության՝ Մեծ պալատի առջև լսմանը ներկայացրած բացատրությունները, մասնավորապես, մերկացնում էին կոնֆլիկտի կարգավորման գործընթացի անարդյունավետությունը. դրանք հիմնված են եղել «պարտադիր» վճռի և այլ վճիռների միջև առկա աննշմար տարբերության վրա: Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի՝ իրավասության վերաբերյալ «պարտադիր» վճիռներն ակնհայտորեն պարտավորեցնող են, մինչդեռ իր կողմից կայացված այլ վճիռները պարզապես ներպետական դատարանին իր եզրակացություններում ուղղորդելու համար նախատեսված նախադեպերի արժեք և ուժ ունեն: Մեզ նաև ասվել է, որ վճիռը «պարտադիր» է, երբ այն սահմանվում է որպես այդպիսին, և որ Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի՝ Գերագույն ռազմական վարչական դատարանի իրավասությունը հաստատելու վերաբերյալ վճիռը (վճռի 44-45-րդ կետերը) չի ընկնում այս հայտնի կատեգորիայի մեջ:

13. Որպես կոնֆլիկտեր կարգավորելու մեխանիզմ՝ Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանն այսպիսով բավարար միջոց չէր թե՛ կանխելու և թե՛ վերջնականապես կարգավորելու համար իրավական անորոշությունը, որն առաջացել էր № 3713 օրենքով նախատեսված թոշակային իրավունքի վերաբերյալ գործերում ընդհանուր իրավասության վարչական դատարանների՝ իրենց իրավասության վերաբերյալ արված տարբեր մեկնաբանությունների արդյունքում (կետեր 28-29 և 76-77): Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի վճիռները, որոնց հղում է կատարել կառավարությունը, ակնհայտորեն չեն կարողացել կաշկանդել ընդհանուր իրավասության վարչական դատարաններին գուտ իրենց համոզման ուժով (կետեր 25-27): Սա նշանակում է, որ, չնայած Իրավասության վերաբերյալ վեճերի դատարանի միջամտությանը, ընդհանուր իրավասության վարչական դատարանների և ռազմական դատարանի միջև իրավասության բաշխման վերաբերյալ անորոշությունը շարունակում է գոյություն ունենալ: Իրավասության վերաբերյալ՝ գործին առնչվող բոլոր դատարանների համար պարտադիր որոշման բացակայությունը միայն կարող է հանգեցնել արդյունքում առաջացած նախադեպային իրավունքի կոնֆլիկտի և համապատասխան անորոշության երկարաձգման:

14. Ինչ վերաբերում է գործի հանգամանքների վերաբերյալ անհետևողականությանը, ապա № 3713 օրենքի 21-րդ կետի մեկնաբանման վերաբերյալ հակասող դատական



## Նեղդետ Սահիևը և Պերիհան Սահիևը ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ

որոշումները եղել են ընդհանուր իրավասության վարչական դատարանների և Գերագույն ռազմական վարչական դատարանի կողմից հիմնականում նմանվող գործերում կատարած միաժամանակյա միջամտության արդյունք (կետեր 62-66): Իրավասության կոնֆլիկտը, որն առաջացել է այս երկու տեսակի դատարանների միջև, որոնց նույն իրավական հարցի վերաբերյալ վճիռ կայացնելու միաժամանակյա դիմումներ էին ներկայացվել, առաջ է բերել իրավական անորոշություն, որը Թուրքիայի դատական համակարգը չի կարողացել կարգավորել:

15. Հետևաբար մենք գտնում ենք, որ արդար դատաքննության իրավունքը խախտվել է իրավասության վերաբերյալ վեճերը կարգավորելու համար նախատեսված մեխանիզմների անարդյունավետ գործունեության, ինչպես նաև նույն փաստական հանգամանքներն ունեցող գործերի վերաբերյալ դատական որոշումների անհամապատասխանության պատճառով: Իրավասություն ունենալու վերաբերյալ Անկարայի վարչական դատարանի տարբեր պալատների անհամաձայնության արդյունքում առաջացած իրավիճակն ավելի է խճճվել սույն գործում № 3713 օրենքի 21-րդ կետի կիրառման պայմանների վերաբերյալ Գերագույն ռազմական վարչական դատարանի և ընդհանուր իրավասության վարչական դատարանների կողմից կատարված տարբեր հիմնավորումների պատճառով:

16. Ներպետական դատական համակարգերը կարող են ներառել տարբեր դատական կառույցներ, բայց վերջիններս չպետք է հանրությանը իրենց՝ կամայականության մեջ կասկածելու առիթ տան. դատական կողմերը դատական հայց ներկայացնելիս պետք է ի վիճակի լինեն կայացնել բավարար աստիճանի կանխատեսելի որոշումներ, որոնք հիմնված կլինեն հստակ, ընդհանուր և կայուն չափանիշի վրա:

17. Եթե նախատեսված չէ արդարադատությունը վերածել վիճակախաղի, ապա դատական կողմերի իրավունքների շրջանակը չպետք է պարզապես կախված լինի այն բանից, թե որ դատարանն է լսում իրենց գործը: Այն փաստը, որ դատական կողմերը կարող են ստանալ նույն իրավական հարցի վերաբերյալ բոլորովին հակադիր պատասխաններ՝ կախված այն բանից, թե ինչ տեսակի դատարան է քննել իրենց գործը, կարող է միայն քայքայել դատարանների արժանահավատությունը և դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունը:

Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ:



Նեղոյեցի Սահիւնը և Պերսիական Սահիւնը ընդդէմ Թուրքիայի գործով  
վճիռ

18. Հիմնվելով այս բոլոր փաստարկների վրա՝ մենք գտնում ենք, որ տեղի է ունեցել  
Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների  
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան  
ներկայացուցչության օժանդակությամբ: